ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

(ապրիլ - հունիս, 2022 թ.)

ՁԵԿՈՒՅՑ

Երևան, 2022

Հայաստանի Հելսինկյան Կոմիտե
Helsinki Committee of Armenia

Բովանդակություն

Հապավումներ 2
Նախաբան 3
Հավաքների ընդհանուր նկարագրությունը 4
Հավաքների դիտարկումների արդյունքները 12
Հավաքների կարգավիճակը 12
Հավաքների թիվն ըստ ներկայացվող պահանջների բնույթի 14
Հավաքների կազմակերպիչները 12
Հավաքների թիվն ըստ մասնակիցների թվաքանակի 16
Հավաքների թիվն ըստ անցկացման ձևերի 18
Հավաքների թիվն ըստ անցկացման վայրի 19
Ոստիկանության վարչարարությունը հավաքների ընթացքում 22
Ոստիկանների քանակը 24
Ոստիկանության սպառազինությունը 26
Միջամտություններ, անհամաչափ ուժի կիրառում և բռնություններ 28
Հետապնդումներ և քրեական գործեր 34
Հետապնդումների օրինակներ 35
Ավետիք Չալաբյան 35
Իգոր Խաչատուրով 36
Արմեն Գրիգորյան 37
Այլ միջադեպեր հավաքների և երթերի ընթացքում 38
Եզրակացություն 42
Առաջարկություններ 45

Հապավումներ

ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱԺ	Ազգային ժողով
ԱԺԲ	Ազգային ժողովրդավարական բևեռ
ԱԽ	Անվտանգության խորհուրդ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԺՀՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ՀԵՎԿ	Հայաստանի եվրոպական կուսակցություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՅԴ	Հայ հեղափոխական դաշնակցություն
ՀՅԴ ՀԵՄ	Հայ հեղափոխական դաշնակցության Հայաստանի երիտասարդական միության
ՀՔԾ	Հատուկ քննչական ծառայություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՔԿ	Քննչական կոմիտե

Նախաբան

«Հայաստանի Հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը շարունակում է խաղաղ հավաքների մշտադիտարկումը Հայաստանի Հանրապետությունում: Հավաքների մշտադիտարկումը իրականացվում է անմիջական դիտորդության, ինչպես նաև ՁԼՄ և այլ աղբյուրների հրապարակումներից ստացված տեղեկությունների համադրմամբ: Կոմիտեի կողմից խաղաղ հավաքների մշտադիտարկման ամբողջական մեթոդաբանությունը հասանելի է 2021 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածի վերաբերյալ զեկույցում[1]:

2022 թ. ապրիլ-հունիս ամիսներին տեղի ունեցած հավաքների մշտադիտարկման ընթացքում արձանագրված կոպիտ խախտումների վերաբերյալ ապրիլի 26-ին և մայիսի 17-ին Կոմիտեն տարածել է առանձին հայտարարություններ[2], ինչպես նաև հրապարակել է 3 միջանկյալ և հրատապ զեկույցներ[3]: Սույն զեկույցում ամփոփված են 2022 թ. հաշվետու ժամանակահատվածում տեղի ունեցած հավաքների մշտադիտարկման ընդհանուր արդյունքները:

[1] Տես Հայաստանի Հելսինկյան կոմիտեի *Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում (նոյեմբեր-դեկտեմբեր 2021 թ.) զեկույցը*, էջ 4, https://bit.ly/3uQiVCA
[2] Տես Կոմիտեի 2022 թ. ապրիլի 26-ի հայտարարությունը՝ https://bit.ly/3Psid77, մայիսի 17-ի հայտարարությունը՝ https://bit.ly/3z6cjCK
[3] Տես *Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում (մայիս 2022) միջանկյալ զեկույցը*՝ https://bit.ly/3IF313O, *Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում (ապրիլ-մայիս 2022 թ.) հրատապ զեկույցը*՝ https://bit.ly/3Pga6ue *2022 թ. հունիսի 3-ին Երևանում տեղի ունեցած հավաք-երթի վերաբերյալ զեկույցը*՝ https://bit.ly/3yLNcnq

Հավաքների ընդհանուր նկարագրությունը

Հաշվետու ժամանակահատվածը առանձնահատուկ էր անցկացված հավաքների քանակով և խտությամբ, որոնց ճնշող մեծամասնությունը կազմակերպվել էին խորհրդարանական և արտախորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունների, նախաձեռնությունների և նրանց աջակիցների կողմից:

Ընդդիմության գրեթե բոլոր դերակատարների կողմից բարձրացված օրակարգում Արցախյան հարցն էր և դրա վերաբերյալ քաղաքական նոր զարգացումները՝ 2020 թ. պատերազմից հետո ստեղծված իրավիճակի համատեքստում: 2022 թ.-ին նման զարգացումներից էին Ադրբեջանի կողմից մարտ ամսին Արցախի գազամատակարարման անջատումները՝ եղանակային վատ պայմաններին զուգահեռ[4], Ադրբեջանի զինված ուժերի կողմից Ասկերանի շրջանի Փառուխ գյուղի գրավումը[5]: Ապրիլի 6-ին Բրյուսելում ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի նախատեսված բանակցություններին ընդառաջ «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունները նախորդ օրը հանրահավաք կազմակերպեցին Ազատության հրապարակում: Ընդդիմությունը մի շարք պահանջներ էր ներկայացրել իշխանություններին՝ բացառել Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելը, չիրականացնել սահմանազծման և սահմանազատման աշխատանքները սպառնալիքի տակ, ինչպես նաև բացառել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին խոչընդոտող որևէ պայմանավորվածություն Թուրքիայի հետ[6]: Հանրահավաքի վերջում մասնակիցները տեղափոխվեցին հարակից Ֆրանսիայի հրապարակ՝ որտեղ տեղադրեցին Արցախի դրոշը:

Ընդդիմադիր պատգամավորները Ֆրանսիայի հրապարակում տեղադրում են Արցախի դրոշը:

---

[4] «*Գազամատակարարումն Արցախում դեռ վերականգնված չէ*», Ազատություն ռադիոկայան, 17.03.2022 թ., https://www.azatutyun.am/a/31757754.html
«*Արցախում գազամատակարարումը կրկին դադարեցվել է*», Ազատություն ռադիոկայան, 21.03.2022 թ., https://www.azatutyun.am/a/31763747.html
[5] «*Փառուխն ու հարակից դիրքերը Ադրբեջանի վերահսկողության տակ են. հայկական կողմն ունի 1 վիրավոր*», Հետք, 25.03.2022 թ., https://hetq.am/hy/article/142661
[6] «*Ազատության հրապարակում մեկնարկել է ընդդիմության հանրահավաքը*», Հետք, 05.04.2022 թ., https://hetq.am/hy/article/143098

Քաղաքական հետագա զարգացումները նույնպես ազդեցություն ունեցան անցկացվող խաղաղ հավաքների օրակարգի վրա: Ապրիլի 13-ին ԱԺ-ում ելույթի ժամանակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ «միջազգային հանրությունն ասում է՝ մի փոքր իջեցրեք ԼՂ կարգավիճակի հարցում ձեր նշաձողը»[7], ինչին հաջորդեցին «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների կողմից արված հայտարարությունները՝ Արցախը Ադրբեջանի կազմում թողնելու նպատակահարմարության մասին[8]: Ապրիլի 18-ին «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր, ՀՀ ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանը աջակիցների հետ Ազատության հրապարակում հայտարարեց նստացույց՝ նպատակ ունենալով կանխել ՀՀ իշխանությունների կողմից Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելու գործընթացը և պահանջելով Ն. Փաշինյանի հրաժարականը[9]: Կարճ ժամանակ անց, նույն օրակարգով հավաքներ նախաձեռնեցին այլ ընդդիմադիր ուժեր՝ «5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցությունը՝ «Համախմբում» նախաձեռնությամբ, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցությունը՝ «Ազատագրական շարժում» նախաձեռնությամբ, «Հայաստան» խմբակցությունը, ինչպես նաև Արցախյան պատերազմների վետերանները, ուսանողներ և քաղաքացիների այլ խմբեր:

Ապրիլի 23-ին Հայոց ցեղասպանության հերթական տարելիցի առթիվ կազմակերպված ջահերով երթի ժամանակ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, ԱԺ նախագահի տեղակալ Իշխան Սաղաթելյանը հայտարարեց մայիսի 1-ից Ն. Փաշինյանին իշխանությունից հեռացնելու նպատակով մեկնարկող շարժման մասին, որը ստացավ «Դիմադրություն» անվանումը: «Հայաստան» խմբակցությունը դեռևս 2021 թ. նոյեմբերի 8-ին Ազատության հրապարակում անցկացված հավաքի ընթացքում էր հայտարարել «համազգային դիմադրության մեկնարկի» մասին՝ կոչ անելով քաղաքացիներին կամավորագրվել հետագա գործողությունների համար[10]:

---

[7] «*«Միջազգային հանրությունը մեզ կրկին ասում է՝ մի փոքր իջեցրեք Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցում ձեր նշաձողը». վարչապետ*», Ազատություն, 13.04.2022 թ., https://www.azatutyun.am/a/31801447.html

[8] «*Ղարաբաղն Ադրբեջանի կազմում ապագա չունի գաղափարը այսօր կարելի է ասել՝ ճիշտ չի եղել. Վիգեն Խաչատրյան*», News.am, 14.04.2022 թ., https://www.youtube.com/watch?v=6rqnUbxsQfg
«*Արցախի հարցում բանակցային մենաշնորհը չարիք է. Մարիա Կարապետյան*», Civilnet, 18.04.2022 թ., https://www.youtube.com/watch?v=mAdGatIl7zQ

[9] «*«Գործողություններն այստեղ են որոշվելու». Վանեցյանը նստացույց է սկսել Ազատության հրապարակում*», Ազատություն, 18.04.2022 թ., https://www.azatutyun.am/a/31807474.html

[10] Տես Հայաստանի Հելսինկյան կոմիտեի *Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում (նոյեմբեր-դեկտեմբեր 2021 թ.) զեկույցը*, էջ 12, https://bit.ly/3uQiVCA

Ապրիլի 23-ին տեղի ունեցած ջահերով երթի մեկնարկը Հանրապետության հրապարակից:

«Դիմադրություն» շարժման շրջանակներում կազմակերպված հավաքներին մասնակցում էին տարբեր կուսակցությունների և քաղաքական նախաձեռնությունների ներկայացուցիչներ, քաղաքական, հասարակական, ռազմական գործիչներ և նախկին պաշտոնյաներ՝ քաղաքական տարբեր թևերից, ինչպես ՀՀ երկրորդ և երրորդ նախագահներ Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը, ՀՀ արտաքին գործերի առաջին նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը, 2020 թ. Արցախյան պատերազմից հետո նույն պաշտոնը զբաղեցրած Արա Այվազյանը, ՀՀ զինված ուժերի նախկին գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովը և այլոք:

Ապրիլի 25-ից մինչև Ապրիլի 30-ը «Դիմադրություն» շարժման շրջանակներում իրականացվում էին իրազեկման երթեր և այլ միջոցառումներ: Զուգահեռաբար, ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորները, իրենց համախոհների հետ, Իջևանից, Տիգրանաշենից, Ապարանից և Սարդարապատից երթեր իրականացրեցին դեպի Երևան՝ միանալով մայիսի 1-ին Ֆրանսիայի հրապարակում հրավիրված հիմնական հանրահավաքին: Հավաքի ղեկավարները հայտարարեցին, որ հաջորդ օրվանից սկսելու են «մասշտաբային անհնազանդության բողոքի ակցիաներ»՝ մինչև Ն. Փաշինյանի հրաժարականը[11]: Հրապարակում տեղադրեցին վրաններ և Ֆրանսիայի հրապարակը դարձավ շարժման կենտրոնը:

[11] «*Ցուցարարները կգիշերեն Ֆրանսիայի հրապարակում, վաղվանից՝ անհնազանդության ակցիաներ*», Ազատություն ռադիոկայան, 01.05.2022 թ., https://www.azatutyun.am/a/31829528.html

Մայիսի 1-ին Ֆրանսիայի հրապարակում անցկացված «Դիմադրություն» շարժման հավաքը

«Դիմադրություն» շարժման հիմնական խորհրդանիշներից էր «Զարթի՛ր, լաո» հայկական ժողովրդական երգը, որը, տարբեր կատարումներով պարբերաբար հնչում էր հավաքների և երթերի ընթացքում, իսկ կազմակերպիչները կոչ էին անում քաղաքացիներին երգը նվագարկել իրենց մեքենաներով երթևեկելու ընթացքում:

Ձախ նկարում՝ «Դիմադրություն» շարժման իրազեկման երթը Հանրապետության հրապարակում (ապրիլի 26): Աջ նկարում՝ շարժման հավաքի մասնակիցը Ֆրանսիայի հրապարակում:

Լայնորեն կիրառվող խորհրդանիշներից Արցախի հանրապետության դրոշն էր, որը հավաքների և երթերի մասնակիցները փակցնում էին իրենց հագուստին, քաղաքի տարբեր վայրերում, իսկ շարժմանն աջակցող քաղաքացիները այն կախում և ծածանում էին իրենց պատուհաններից, ավտոմեքենաներից՝ ողջունելով երթերի մասնակիցներին: Հավաքի կազմակերպիչները կոչ էին անում քաղաքացիներին կախել Հայաստանի և Արցախի դրոշները իրենց պատուհաններից:

Քաղաքացիները ողջունում են «Դիմադրություն» շարժման երթերի մասնակիցներին՝ ծածանելով Հայաստանի և Արցախի դրոշները:

Ապրիլ-հունիս ամիսներին ընդդիմադիր ուժերի և հավաքների մասնակիցների կողմից կազմակերպվում էին բազմատեսակ միջոցառումներ՝ հանրային քննարկումներ, դասախոսություններ, համերգներ, խորհրդանշական ֆլեշմոբեր և այլ գործողություններ: «Դիմադրություն» շարժման իրազեկման երթերի ընթացքում ընդդիմադիր պատգամավորները խորհրդանշական գործողություններ էին կատարում՝ փակում արագաչափերի տեսախցիկները, ներկում ավտոկայանատեղիների կարմիր գծանշումները՝ հղում անելով Ն. Փաշինյանի կողմից 2018 թ. ապրիլյան հավաքների ընթացքում իրականացրած գործողություններին[12] և նախկինում հնչեցված դիրքորոշումներին[13]:

Ձախ նկարում՝ ապրիլի 25-ի երթի ընթացքում «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը Ն. Փաշինյանի դիմանկարով փակում է արգաչափի տեսախցիկը: Աջ նկարում՝ հաջորդ օրը անցկացված երթի ընթացքում նույն խմբակցության պատգամավոր Ի. Սաղաթելյանը ներկում է ավտոկայանատեղի կարմիր գծանշումը:

Ապրիլի 19-ին «Համախմբում» շարժման մասնակիցները, երկար կարմիր ժապավենով երթ անցկացրեցին Երևանի ԲՈՒՀ-երի մոտով: Ըստ վերջիններիս՝ ժապավենը խորհրդանշում էր Արցախի Ադրբեջանի կազմում չճանաչելու «կարմիր գիծը», որը իշխանությունները չպետք է հատեն: Մեկ այլ՝ մայիսի 4-ին «Ազատագրական շարժում» նախաձեռնության կազմակերպած հավաքի ընթացքում անդամներից մեկը Ն. Փաշինյանի դիմակով դուրս էր եկել Հանրապետության հրապարակ, իսկ մյուսները բացականչում էին «ձերբակալե՛ք Նիկոլին», ինչը և արեցին հավաքի վայրում գտնվող ոստիկանները[14]:

[12] «*#ԻմՔայլը անտիսաշիկ-4:*», Նիկոլ Փաշինյան, 10.04.2018 թ., https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/2020341544952897
[13] «*Սաշիկը փայ է մտել վարորդների ընտանեկան բյուջեին*», Նիկոլ Փաշինյան, 24.03.2014 թ., https://www.youtube.com/watch?v=ImhJHVa-duU
[14] «*Փաշինյանի լուսանկարով դիմակներ կրած քաղաքացիները Կառավարության բակից բերման ենթարկվեցին*», News.am, 04.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=AXoZgVVE0ac&t=33s

Ապրիլի 14-ին «Համախմբում» շարժման անդամների անցկացրած կարմիր ժապավենով երթը:

Մայիսի 1-ից անցկացված հավաքների մեծամասնության տրամաբանությունը խաղաղ քաղաքացիական անհնազանդության գործողություններն էին, որի ընթացքում քաղաքացիները արգելափակում էին բանուկ փողոցների երթևեկությունը՝ այդ կերպ փորձելով ճնշում գործադրել իշխանությունների վրա և ավելացնել համակիրների թիվը: Յուրաքանչյուր օր Ֆրանսիայի հրապարակում անցկացվող հիմնական հավաքի ընթացքում ղեկավարները հայտարարում էին հաջորդ օրը նախատեսված բողոքի գործողությունների մասին՝ հիմնականում աշխատանքային օրվա սկզբի ժամերին:

Ձախ նկարում՝ ՀՅԴ ՀԵՄ անդամները անվադողերով արգելափակում են Կոմիտասի պողոտայի երթևեկությունը (ապրիլի 26): Աջ նկարում՝ քաղաքացիները արգելափակում են Նալբանդյան փողոցի երթևեկությունը՝ անընդհատ քայլելով հետիոտն անցումով (մայիսի 18):

Ըստ դիտարկման արդյունքների՝ մայիսի սկզբին Երևանում առավոտյան ժամերին անցկացվող նման հավաքների քանակը կազմում էր 4-7-ը՝ որոնք զուգահեռաբար անցկացվում էին քաղաքի տարբեր հատվածներում: Որոշ օրերին քաղաքացիական անհնազանդության գործողություններ են կազմակերպվել նաև մարզերում, օրինակ՝

մայիսի 3-ին «Դիմադրություն» շարժման աջակիցները արգելափակել էին Երևան-Վայք[15], մայիսի 5-ին՝ Երևան-Աշտարակ[16] և Երևան-Իջևան[17] ավտոճանապարհները: Երեկոյան ժամերին Ֆրանսիայի հրապարակում կազմակերպվում էին հիմնական հավաքները, որոնց ընթացքում անցկացվում էին երթեր դեպի՝ անցնելով տարբեր պետական մարմինների նստավայրերի և վարչական շենքերի մոտով:

«Դիմադրություն» շարժման ընթացքում բազմաթիվ քաղաքական շահարկումների առիթ է հանդիսացել հավաքների մասնակցության թիվը: Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության որոշ պատգամավորների պնդմամբ շարժման երթերին մասնակցում էին մի քանի հարյուր հոգի[18]: Օրինակ՝ պատգամավոր Հ. Աղազարյանը կարծիք էր հայտնել, որ երթերի ժամանակ «այն 200 հոգին, որ վխտում են քաղաքում» նպատակ ունեն սպանել վարչապետին[19]: Մյուս կողմից, «Դիմադրություն» շարժման մասնակիցների կարծիքով հավաքների մասնակցության թիվը հասնում էր 50.000-ի[20]: Ըստ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի կողմից մշտադիտարկման ընթացքում կատարված մանրամասն հաշվարկի՝ ընդդիմության հիմնական երթերի մասնակցությունը ունեցել է հետևյալ տեսքը[21]:



[15] «*Ցուցարարները բեռնատարներով փակել են Վայք–Երեւան ավտոճանապարհը. իրավիճակը մի պահ սրվեց*», News.am, 03.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=kH2aTe-jN7s
[16] «*Ցուցարարները փակել են Աշտարակ-Երևան մայրուղին. երթեւեկությունը կաթվածահար է*», News.am, 05.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=Ogf1nPY7K8w
[17] «*Քաղաքացիները փակել են Երևան-Իջևան ճանապարհը*», Para TV, 05.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=38KEuCfZQHY
[18] «*«Տարիներ շարունակ ընտրություններում փողով հաղթել են, հիմա էլ որոշել են, որ էլի փողով ժողովրդին կառնեն, կբերեն հրապարակներ». Արփի Դավոյան*», MediaLab, 06.05.2022 թ., https://medialab.am/223360/
[19] «*200 հոգի վխտում են, որ վարչապետին սպանեն. Հովիկ Աղազարյան*», 24 TV, 29.04.2022 թ., https://www.youtube.com/watch?v=8CHzRH0LOso
[20] «*Տարբեր հաշվարկներով՝ մայիսի 1-ի ցույցին մասնակցել է 40-50 հազար մարդ. Հայկ Մամիջանյան*», Ազատություն ռադիոկայան, 02.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=UrQ89MEK_fQ
[21] Բազմամարդ երթերի հաշվարկը կատարվել է դիտորդների կողմից տեսախցիկով մեկ կետից և բարձր անկյունից ամբողջական երթի ընթացքի տեսագրմամբ, այնուհետև՝ տեսագրության միջոցով մասնակիցների և երթն ուղեկցող ոստիկանների հաշվարկով:

Ապրիլ-հունիս ամիսներին դիտարկված խաղաղ հավաքների ընթացքում աննախադեպ են եղել ոստիկանության միջամտությունները: Դիտարկվել են հավաքների վայրում գտնվող լրատվամիջոցների աշխատակիցների գործունեությանը խոչընդոտելու, ինչպես նաև ԱԺ ընդդիմադիր պատգամավորների ազատությունը սահմանափակելու և բերման ենթարկելու, նրանց նկատմամբ բռնություն կիրառելու դեպքեր: Հավաքի վայրերից բերման են ենթարկվել ոչ միայն փողոցի երթևեկելի հատվածում գտնվող, այլև մայթերին կանգնած մասնակիցները: Քաղաքացիական անհնազանդության մասնակիցներին բերման ենթարկելու ընթացքում ոստիկանության, հատկապես՝ ՊՊԾ գնդի 3-րդ հատուկ գումարտակի և ոստիկանության զորքերի ծառայողները հաճախ կիրառել են անհամաչափ ուժ և բռնություններ: Բազմաթիվ հավաքի մասնակիցներ ստացել են մարմնական վնասվածքներ, որոշ դեպքերում տեղափոխվել բժշկական հաստատություններ: Ոստիկանության բռնությունների գագաթնակետը եղել է հունիսի 3-ին Դեմիրճյան-Պարոնյան փողոցների խաչմերուկին անցկացված հավաքի ընթացքում: Ոստիկանության ծառայողները բացահայտ կերպով, տեսախցիկների առջև ծեծի են ենթարկել առնվազն 8 ցուցարարի: Արձանագրվել են հավաքների վայրերից անձանց 2000-ից ավելի բերման ենթարկելու դեպքեր: Հավաքների մի քանի տասնյակ մասնակիցներ ձերբակալվել և կալանավորվել են:

«Դիմադրություն» շարժման մի շարք հավաքների և երթերի ընթացքում միջադեպեր և ընդհարումներ են եղել հավաքի մասնակիցների, մյուս կողմից՝ քաղաքական հակադարձ հայացքներ ունեցող քաղաքացիների կամ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամների և աջակիցների միջև:

Նկարագրված իրադարձությունները առավել մանրամասն քննարկված են սույն զեկույցի հաջորդ բաժիններում:

Հավաքների դիտարկումների արդյունքները

2022 թ. ապրիլ-հունիս ամիսներին դիտարկվել է 110 հավաք՝ Երևանում: Հայաստանի Հանրապետության այլ վայրերում տեղի ունեցավ հավաքների և միջադեպերի ուսումնասիրությունը կատարվել է ՁԼՄ-ների հրապարակումների և այլ բաց աղբյուրների դիտարկմամբ:

Հավաքների կարգավիճակը

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված հավաքների հիմնական մասը՝ «Դիմադրություն» շարժման շրջանակներում անցկացված հավաքները, կազմակերպվել են որպես շտապ հավաք, իսկ մյուս մասի պարագայում, օրինակ՝ քաղաքացիական անհնազանդության գործողությունների ընթացքում, մասնակիցների թիվը հիմնականում չի գերազանցել 100-ը, որի պարագայում իրազեկում ներկայացնելու անհրաժեշտություն չի եղել: Հարկ է նշել, որ քաղաքացիական անհնազանդության գործողությունների ընթացքում փաստացի կարգադրիչի գործառույթներ են իրականացնում ընդդիմադիր քաղաքական ուժերի անդամները, որոնք սակայն չեն կրում օրենքով սահմանված տիպի տարբերանշաններ, որոնց վրա պետք է նշված լինի «կարգադրիչ» բառը[22]:

Ազատության հրապարակում ապրիլի 25-ից մինչև մայիսի 9-ը շուրջօրյա հավաք անցկացնելու իրազեկումներ էր ներկայացրել Ա. Վանեցյանի կողմից գլխավորած «Հայրենիք» կուսակցության գլխավոր քարտուղար Ա. Բաբայանը[23], սակայն, մայիսի 1-ին ընդդիմության հավաքները տեղափոխվել են Ֆրանսիայի հրապարակ: Հաշվետու ժամանակահատվածի գրեթե բոլոր օրերին, ԱԺԲ-ի կողմից Ազատության հրապարակում հավաքներ և Կենտրոն վարչական շրջանի փողոցներով երթեր անցկացնելու վերաբերյալ իրազեկումներ է ներկայացվել քաղաքացի Հ. Հովհաննիսյանը: Քաղաքապետարանի կողմից իրազեկումները ընդունվել են ի գիտություն, սակայն մերժվել է դրանց ընթացքում վրանների տեղադրումը: Այդուհանդերձ, ԱԺԲ-ն Ազատության հրապարակում հավաք է անցկացրել միայն ապրիլի 9-ին:

Հավաքների կազմակերպիչները

Հաշվետու ժամանակահատվածում անցկացված հավաքները հիմնականում կազմակերպված էին ընդդիմության՝ առավելապես խորհրդարանական «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունների, վերջիններիս անդամներ ՀՅԴ, Վերածվող Հայաստան, ՀՀԿ և Հայրենիք կուսակցությունների, ինչպես նաև այդ կուսակցությունների երիտասարդական կազմակերպությունների կողմից (40 հավաք):

Ապրիլի 18-ին Պատիվ ունեմ խմբակցության պատգամավոր, ՀՀ ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանը Ազատության հրապարակում հայտարարեց նստացույց՝ նպատակ

[22] Տե՛ս Հավաքների ազատության մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը
[23] Տես իրազեկումները Երևանի քաղաքապետարանի կայքում, https://www.yerevan.am/am/public-meeting/havak-ner-ants-kats-nelow-veraberyal-irazekowm-12/, https://www.yerevan.am/am/public-meeting/havak-ants-kats-nelow-veraberyal-irazekowm-60/

ունենալով կանխել ՀՀ *իշխանությունների կողմից Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելու գործընթացը*: Նույն ժամանակահատվածում հավաքներ են կազմակերպել «5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցությունը, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցությունը, «Հայաստան» դաշինքը, ինչպես նաև Արցախյան պատերազմների մի խումբ վետերաններ, ուսանողներ և քաղաքացիների այլ խմբեր: Ապրիլի 23-ին՝ Հայաստան խմբակցության պատգամավոր Ի. Սաղաթելյանը հայտարարեց ապրիլի 25-ից մեկնարկող *ապակենտրոն բողոքի ցույցերի մասին:* Ապրիլից հունիս ընկած ժամանակահատվածում մի քանի հավաքներ են կազմակերպվել նաև ՀԵՎԿ-ի և ԱԺԲ-ի կողմից:

Հավաքներից 54-ը կազմակերպվել են ընդդիմադիր կուսակցությունների և վերջիններիս համախոհների կողմից ձևավորած քաղաքական նախաձեռնությունների շրջանակներում, (54 հավաք): Այսպես՝ Հայաստան և Պատիվ ունեմ խմբակցությունների կողմից ապրիլի վերջից կազմակերպված հավաքները տեղի էին ունենում մեկնարկած «Դիմադրություն»[24] շարժման շրջանակներում: Նույն օրակարգով հավաքներ են կազմակերպվել «5165» ԱՊՇ կուսակցության և համախոհների կողմից ձևավորած «Համախմբում»[25] շարժման, ինչպես նաև դեռևս 2021 թ. «Զարթոնք» կուսակցության մասնակցությամբ ձևավորված «Ազատագրական շարժում» նախաձեռնության շրժանակներում: Մի շարք հավաքներ են կազմակերպվել «Երիտասարդի ձայնը»[26] և «Ազատագրում»[27] նախաձեռնությունների կողմից: Դիտարկված հավաքներից մեկը կազմակերպել է նախկին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը՝ ապրիլի 30-ին:

2020 թ. Արցախյան պատերազմի ընթացքում զոհված և անհետ կորած զինծառայողների ծնողները և հարազատները շարունակել են հավաքների կազմակերպումը: Ապրիլ-հունիս ամիսներին դիտարկվել է վերջիններիս կողմից կազմակերպված 9 հավաք:

Մինչև մայիսի 1-ը Ազատության հրապարակում հավաքներ են անցկացրել քաղաքացիների այլ խմբեր, օրինակ՝ «Սև հովազ» կամավորական ջոկատի անդամները, անհամաձանություն հայտնելով Ն. Փաշինյանի կողմից ապրիլի 13-ին ԱԺ-ում հնչեցված մտքերին: Զուգահեռաբար նույն վայրում հացադուլ էին հայտարարել 2020 թ. Արցախյան պատերազմի մասնակիցներ Նվեր Կիրակոսյանն ու Արթուր Ավագյանը, որի նպատակը երիտասարդության ուշադրության գրավումն էր Արցախի շուրջ ստեղված իրավիճակի նկատմամբ: Հաշվետու շամանակահատվածում մի քանի հավաքներ են կազմակերպվել ՀՀ-ում գտնվող Ուկրաինայի և Ռուսաստանի քաղաքացիների և վերջիններիս համախոհների կողմից՝ ընդդեմ պատերազմի:

[24] Դիմադրություն շարժման առցանց համակարգումը հիմնականում տեղի էր ունենում Հայաստան դաշինքի ֆեյսբուքյան էջով, https://www.facebook.com/hayastandashinq
[25] https://www.facebook.com/Hamaxmbum.Movement
[26] https://www.facebook.com/yeritasardidzayn
[27] https://www.facebook.com/azatagrummovement/

Ձախ նկարում՝ «Սև հովազ» կամավորական ջոկատի անդամների նստացույցը, աջ նկարում՝ 2020 թ. Արցախյան պատերազմի մասնակիցներ Ն. Կիրակոսյանի ու Ա. Ավագյանի հացադուլ-նստացույցը:

Հասարակական կազմակերպություններից հավաքի կազմակերպչի դերում հանդես է եկել միայն «Հանուն Հադրութի» ՀԿ-ն, որը ներկայացնում է 2020 թ. Արցախյան պատերազմի արդյունքում իրենց բնակավայրերից տեղահանվածների պահանջները:



Հավաքների թիվն ըստ ներկայացվող պահանջների բնույթի

Ապրիլ-հունիս ամիսներին դիտարկված հավաքների ճնշող մեծամասնության պարագայում բարձրացված հարցերը կրել են քաղաքական բնույթ (96 հավաք):

ԱԺ ընդդիմադիր երկու խմբակցությունների, ինչպես նաև մի շարք արտախորհրդարանական քաղաքական միավորների և նախաձեռնությունների կողմից ներկայացված հիմնական պահանջը իշխանությունների կողմից Արցախը Ադրբեջանի կազմում չճանաչելն էր և ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի հեռացումը իշխանությունից: Բացի իշխանությունների հետ ունեցած ընդհանուր քաղաքական տարաձայնություններից,

ընդդիմադիրների դիրքորոշման հիմքում ընկած էին Ն. Փաշինյանի կողմից ապրիլի 13-ին ԱԺ-ում ունեցած ելույթը՝ *Արցախի կարգավիճակի հարցում նշաձողը իջեցնելու՝ միջազգային հանրության առաջարկի* մասին: Բացի շարժման հիմնական պահանջներից, ընդդիմադիրները ներկայացնում էին այլ պահանջներ՝ կախված տվյալ պահին տեղի ունեցող քաղաքական զարգացումներից, օրինակ՝ պետական տարբեր պաշտոնյաներից պահանջելով հայտարարել «Արցախը չի լինելու Ադրբեջանի կազմում» արտահայտությունը, ԲԴԽ նախագահի պաշտոնակատար Գ. Ջհանգիրյանի հրաժարականը՝ պայմանավորված վերջինիս կողմից քրեական գործերին միջամտելու վերաբերյալ աղմկահարույց ձայնագրության հրապարակմամբ[28]: «5165» շարժման անդամները ապրիլի 4-ին ԱԺ առջև անցկացված հավաքի ընթացքում իշխանություններից նաև պահանջում էին ճանաչել Արցախի անկախությունը:

Քաղաքական բնույթի այլ պահանջներ են բարձրացվել ԱԺԲ-ի և ՀԵՎԿ-ի կողմից կազմակերպված հավաքների ընթացքում, որոնց բովանդակությունը հիմնականում ուղղված էին ընդդեմ Ռուսաստանի Դաշնության, պահանջելով վերջինիս «հեռացումը Հայաստանից»:

Մի շարք հավաքներ են կազմակերպել 2020 թ. Արցախյան պատերազմի ընթացքում զոհված զինծառայողների ծնողները և հարազատները, որոնք պահանջում էին քրեական մեղադրանք առաջադրել Ն. Փաշինյանին՝ իսկ իրենց ճանաչել որպես տուժողի իրավահաջորդներ: Ըստ վերջիններիս, պահանջը պայմանավորված էր Ն. Փաշինյանի կողմից ապրիլի 13-ին ԱԺ-ում ունեցած ելույթով, որտեղ վերջինիս պնդմամբ պատերազմը հնարավոր էր կանխել, սակայն այդ դեպքում «կուլենայինք նույն վիճակը՝ իհարկե առանց զոհերի»[29]: Սոցիալական բնույթի հարցեր են բարձրացվել 2020 թ. պատերազմի արդյունքում Արցախից տեղահանված քաղաքացիների կողմից, որոնք պահանջում էին իրենց տրամադրել փախստականի կարգավիճակ, ինչպես նաև լուծել սոցիալական աջակցության հարցերը:

2020 թ. Արցախյան պատերազմում զոհված և անհետ կորած զինծառայողների հարազատների կողմից կազմակերպված երթերը ապրիլի 26-ին և ապրիլի 30-ին:

[28] «*Ռուբեն Վարդազարյանը աղմկահարույց ձայնագրություն է հրապարակել Գագիկ Ջհանգիրյանի մասնակցությամբ. 18+*», Իրավաբան.net, 20.06.2022 թ., https://www.youtube.com/watch?v=nVdLTsF2qns
[29] «*Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը՝ Կառավարության ծրագրի կատարման վերաբերյալ*», Parliament of Armenia, 13.04.2022 թ., https://www.youtube.com/watch?v=LBkaO9csAmw

Հավաքներից երկուսը կազմակերպվել են ՀՀ-ում գտնվող ազգությամբ ուկրաինացի և ռուս մի խումբ անձանց կողմից՝ ընդդեմ Ուկրայինայում տեղի ունեցաղ պատերազմի:

Ապրիլի 1-ին հավաք են կազմակերպել Երևանի Ա. Չեխովի անվան N 55 դպրոցի ուսուցիչները, աշակերտները և նրանց ծնողները՝ ընդդեմ դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի փոփոխության: Ըստ հավաքի մասնակիցների՝ Երևանի քաղաքապետարանի կողմից նշանակված տնօրենի նոր ԺՊ-ն՝ Դ. Մինասյանը երբևէ չի աշխատել իրենց դպրոցում և նախկին փոխվարչապետ Տ. Ավինյանի դասընկերոջ կինն է:



Հավաքների թիվն ըստ մասնակիցների թվաքանակի

Ապրիլ – հունիս ամիսներին դիտարկված հավաքներից 52-ի պարագայում մասնակիցների թիվը չի գերազանցել 100-ը: Դրանք հիմնականում եղել են ընդդիմադիր կուսակցությունների, վերջիններիս երիտասարդական կազմակերպությունների, քաղաքական նախաձեռնությունների և նրանց համախոհների կողմից իրականացված քաղաքացիական խաղաղ անհնազանդության գործողություններով զուգորդված հավաքները, որի ընթացքում փոքր խմբերով մասնակիցները ժամանակավորապես արգելափակում էին փողոցների երթևեկությունը՝ փորձելով ճնշում գործադրել իշխանությունների վրա: Մինչև 100 մասնակից ներգրավող հավաքներ և բողոքի գործողություններ են իրականացրել նաև 2020 թ. Արցախյան պատերազմի ընթացքում զոհված և անհետ կորած զինծառայողների հարազատները և պատերազմի ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած վետերանները: Մի շարք հավաքներ կազմակերպվել են ՀՀ-ում գտնվող Ուկրայինայի և Ռուսաստանի քաղաքացիների կողմից:

Հավաքներից 28-ի պարագայում մասնակիցների թիվը տատանվել է 100-ից 1000-ի միջև: Նշված հավաքներից են եղել, կրկին, ընդդիմադիր ՀՅԴ, ՀՀԿ, Վերածնվող Հայաստան և Հայրենիք կուսակցությունների կողմից «Դիմադրություն» շարժման շրջանակներում առավոտյան և ցերեկային ժամերին իրականացված երթերը, ինչպես նաև մինչև մայիսի 1-ը Ազատության հրապարակում հրավիրված հավաքները, որի ընթացքում մասնակիցների թիվը տատնվում էր 100-600-ի մեջ: Նշված մասնակցության միջակայքում անցկացված այլ հավաքներից են ՀՀ նախկին ՄԻՊ Ա. Թաթոյանի կողմից ապրիլի 30-ին կազմակերպված հավաքը (մոտ 150 մասնակից), 2020 թ. Արցախյան պատերազմի զոհերի հարազատների կողմից ապրիլի 26-ին Շարլ Ազնավուրի հրապարակից դեպի ՀՀ կառավարության նստավայր և Դատախազություն անցկացված երթը, ինչպես նաև ԱԺԲ կողմից ապրիլի 9-ին Ազատության հրապարակում անցկացված հավաքը և հետագա երթը դեպի ՌԴ և ԱՄՆ դեսպանատներ (մոտ 800 մասնակից):

Ձախ նկարում՝ Ազատության հրապարակում անցկացվող ընդդիմության հավաքներից մեկը (ապրիլի 21): Աջ նկարում՝ Մարտիրոս Սարյանի անվան պուրակում ՀՀ նախկին ՄԻՊ Ա. Թաթոյանի կազմակերպած հավաքը (ապրիլի 30):

Դիտարկվել է 1000-ից մինչև 10.000 միջակայքում մասնակցություն ունեցող 27 հավաք: Դրանք էին ապրիլի 25-ից մինչև ապրիլի 29-ը Երևանի տարբեր վարչական շրջաններից ընդդիմության կողմից անցկացված «Դիմադրություն» շարժման իրազեկման երթերը (մասնակցությունը՝ 1100-ից 1400 մասնակից), ինչպես նաև մայիս-հունիս ամիսներին Ֆրանսիայի հրապարակում պարբերաբար անցկացվող հանրահավաք-երթերը: Նշված հավաք-երթերի մասնակցությունը տատանվել է 1100-ից մինչև 6800-ի միջև, միջինում ունենալով 2900 մասնակից:

Առավել մեծ քանակով՝ 10.000-ից ավելի մասնակից ներկա է գտնվել, կրկին, ընդդիմության կողմից կազմակերպված մի քանի հավաքների ընթացքում: Առաջինը ապրիլի 5-ին «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունների կողմից Ազատության հրապարակում հրավիրված հավաքն էր (մոտ 12.000 մասնակից), այնուհետև՝ ապրիլի 23-ին ՀՅԴ կողմից կազմակերպված երթը դեպի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր (մոտ 17.000 մասնակից), ինչպես նաև մայիսի 1-ին Ֆրանսիայի հրապարակում «Դիմադրություն» շարժման շրջանակներում անցկացված հավաքը (մոտ 13.000 մասնակից):



Հավաքների թիվն ըստ անցկացման ձևերի

Դիտարկված հավաքների մեծ մասն անցկացվել է որոշակի վայրում (44 հավաք), 34-ի դեպքում տեղի է ունեցել նաև երթ, 32-ն անցկացվել է միայն երթի ձևով:

Դիմադրություն շարժման շրջանակներում ապրիլի 25-ից մինչև 29-ը ընդդիմադիր կուսակցությունները անցկացնում էին իրազեկման երթեր՝ Երևանի տարբեր վարչական շրջաններում: Զուգահեռաբար, ընդդիմադիրների խմբերը դեպի Երևանի երթեր էին կազմակերպել Իջևանից, Տիգրանաշենից, Ապարանից և Սարդարապատից, որոնք մայիսի 1-ին ժամանեցին Երևան և միացան Ֆրանսիայի հրապարակում կազմակերպված հավաքին:

Սկսած մայիսի 1-ից, «Դիմադրություն» շարժման ղեկավարների կոչով քաղաքացիները առավոտյան ժամերին Երևանի տարբեր հատվածներում ժամանակավորապես արգելափակում էին փողոցային երթևեկությունը՝ այդ կերպ փորձելով ճնշում գործադրել իշխանությունների վրա: Մասնակիցները հաճախ կիրառում էին հանրային վայրերում գտնվող առարկաներ՝ նստարաններ, ցուցանակներ, աղբարկղեր, որոնցով կահավորում էին երթևեկության համար խոչընդոտներ: Նշված հավաքների ընթացքում, որպես կանոն, ներկա էին լինում ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորներ կամ ընդդիմադիր կուսակցությունների անդամներ: Տարբեր օրերին շարժման շրջանակներում կազմակերպվել են ավտոերթեր:

Մայիսի 11-ին անցկացված «Դիմադրություն» շարժման երթի մասնակիցները շրջափակում են Երևանի քաղաքապետարանի վարչական շենքը:

«Դիմադրություն» շարժման մի քանի երթերի ընթացքում մասնակիցները, հավաքի ղեկավարների կոչով, շրջափակել էին պետական մարմինների վարչական շենքերը, փորձելով թույլ չտալ ելումուտը: Նշվածներից էին մայիսի 11-ին դեպի Երևանի քաղաքապետարան, մայիսի 13-ին դեպի ՀՀ կառավարության 3-րդ մասնաշենք, մայիսի 24-ին դեպի ԱԳՆ, հունիսի 3-ին դեպի Կառավարության նստավայր իրականացված երթերը:



Հավաքների թիվն ըստ անցկացման վայրի

Կոմիտեի կողմից դիտարկված բոլոր հավաքներն անցկացվել են Երևան քաղաքում: Որոշ երթերի պարագայում մասնակիցները կանգ են առել տարբեր մարմինների նստավայրերի առջև, հետևաբար՝ դրանք հաշվարկվել են որպես առանձին հավաքի վայրեր:

Դիտարկված հավաքների և երթերի մեծամասնությունը կազմակերպվել է կամ որևէ պետական մարմնի նստավայրի կամ վարչական շենքի մոտ: Հաճախ «Դիմադրություն» շարժման նույն երթի ընթացքում կազմակերպիչները երթը ուղղորդում էին տարբեր պետական մարմինների նստավայրերի և վարչական շենքերի մոտ՝ ուղղելով իրենց կոչերը կամ պահանջները վերջիններիս պաշտոնյաներին: Առավել հաճախ երթերի «թիրախում» էր ՀՀ կառավարության նստավայրը, ուժային կառույցների վարչական շենքերը, ինչպես նաև ՀՀ ԱԺ և նախագահի նստավայրերը: 2020 թ. Արցախյան պատերազմի ընթացքում զոհված և անհետ կորած զինծառայողների հարազատները մի շարք հավաքներ են անցկացրել ՀՀ գլխավոր դատախազության վարչական շենքի առջև՝ պահանջելով մեղադրանք առաջադրել Ն. Փաշինյանին, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի առջև՝ պահանջելով պատշաճ քննություն իրենց բողոքի վերաբերյալ:

Ապրիլից մինչև մայիսի 1-ը բազմաթիվ հավաքներ են անցկացվել Ազատության հրապարակում: Դրանցից էին ապրիլի 5-ին «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունների կողմից կազմակերպված հավաքը, ինչպես նաև հաջորդող ժամանակահատվածում Ա. Վանեցյանի, «5165» շարժման, պատերազմի վետերանների և այլոց կողմից կազմակերպված հավաքները: Մայիսի 1-ից, Դիմադրություն շարժման մասնակիցները վրաններ և տաղավարներ տեղադրեցին Ֆրանսիայի հրապարակում, որը դարձավ հավաքների, երթերի, քննարկումների, ստորագրահավաքների և այլ միջոցառումների հիմնական վայրը: Հունիսի 14-ին «Դիմադրությունն» ղեկավարները հայտարարեցին շարժման ձևաչափի փոփոխության մասին և հեռացրեցին վրանները Ֆրանսիայի հրապարակից:

Ձախ նկարում՝ Լեհաստանում ՀՀ նախկին դեսպան Էդգար Ղազարյանը դասախոսություն է կարդում Ֆրանսիայի հրապարակում (մայիսի 3): Աջ նկարում՝ քաղաքական բանտարկյալներին ազատ արձակելու պահանջով կազմակերպված ստորագրահավաքի տաղավարը Ֆրանսիայի հրապարակում (մայիսի 26):

Հաշվետու ժամանակահատվածում Հանրապետության հրապարակում հավաքներ են կազմակերպվել «Ազատագրական շարժում» նախաձեռնության կողմից:

Հավաքներից և երթերից 8-ը կազմակերպվել են միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների և ՌԴ, ԱՄՆ դեսպանատների առջև: Ապրիլի 7-ին Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի առջև հավաք է կազմակերպել «Հանուն Հադրութի» ՀԿ-ն՝

պահանջելով քայլեր ձեռնարկել Արցախից տեղահանվածների վերադարձի ուղղությամբ: Հունիսի 7-ին «Դիմադրություն» շարժման անդամները հավաք էին կազմակերպել Հայաստանում ԵՄ պատվիրակության գրասենյակի առջև՝ պահանջելով դատապարտել հունիսի 3-ին տեղի ունեցած հավաքի ընթացքում ոստիկանության կողմից կիրառված միջամտությունները և բռնությունները: ՌԴ դեսպանատան առջև հավաքներ են կազմակերպել ԱԺԲ-ն, ՀԵՎԿ-ը և ՀՀ-ում գտնվող Ուկրաինայի և Ռուսաստանի քաղաքացիները՝ քննադատելով ՌԴ քաղաքականությունը: Դեպի ԱՄՆ դեսպանատուն երթ է իրականացվել ԱԺԲ-ի կողմից: ԱԺԲ-ի հավաքների ընթացքում հնչում էին ընդդեմ ՌԴ-ի հայտարարություններ՝ հավաքի ղեկավարները ՌԴ-ին մեղադրում էին Թուրքիայի և Ադրբեջանի դաշնակիցը լինելու մեջ: ՌԴ դեսպանատան առջև անցկացված հավաքներից երկուսի դեպքում տեղի են ունեցել հակադարձ ուղղվածությամբ հավաքներ: Ապրիլի 21-ին ՀԵՎԿ-ի և ՀՀ-ում գտնվող Ուկրաինայի և Ռուսաստանի քաղաքացիների կողմից անցկացված հավաքին հակընդդեմ հավաք էր կազմակերպվել «Ազատագրում» նախաձեռնության ղեկավար Միքայել Բադալյանը, իսկ մայիսի 9-ին ԱԺԲ-ի հավաքի ընթացքում՝ քաղաքական ակտիվիստ Մանուել Մանուկյանը:

Մայիսի 9-ին ՌԴ դեսպանատան առջև ԱԺԲ կողմից կազմակերպված երթը և Մ. Մանուկյանի հակընդդեմ հավաքը:

Դիտարկված հավաքներից 43-ը անցկացվել են Երևանի այլ վայրերում: «Դիմադրություն» շարժման շրջանակներում կազմակերպված քաղաքացիական խաղաղ անհնազանդության գործողությունները կազմակերպվում էին Երևանի բանուկ խաչմերուկներում: Ընդդիմադիրները երթեր էին կազմակերպում Երևանի տարբեր վարչական շրջաններում, որոնք հիմնականում ավարտվում էին Ֆրանսիայի հրապարակում: Շարժման մասնակիցները նաև երթեր են իրականացրել դեպի Երևանի ԲՈՒՀ-եր՝ կոչ անելով ուսանողներին միանալ իրենց: Ընդդիմության երթերը նաև պարբերաբար անցկացվել են Դեմիրճյան-Պարոնյան խաչմերուկին գտնվող դեպի կառավարական առանձնատներ տանող ճանապարհի սկզբնամասում և Սայաթ-Նովայի պողոտայում գտնվող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակի առջև: Մի քանի հավաքներ կազմակերպվել են Երևանի պուրակներում՝ Օղակաձև զբոսայգում գտնվող Տարաս Շևչենկոյի հուշարձանի մոտ, որոնք կազմակերպվել էին ՀՀ-ում գտնվող

Ուկրաինայի, Ռուսաստանի քաղաքացիների և ՀԵՎԿ-ի կողմից, ինչպես նաև Մարտիրոս Սարյանի անվան պուրակում՝ ՀՀ նախկին ՄԻՊ Արման Թաթոյանի կողմից:



Ոստիկանության վարչարարությունը հավաքների ընթացքում

Ոստիկանության ներգրավվածությունը դիտարկված հավաքների ընթացքում եղել է աննախադեպ՝ տևական ժամանակահատվածի համեմատ: Գրեթե ողջ հաշվետու ժամանակահատվածում ոստիկանության մեծաքանակ ուժեր պարբերաբար ներկա են գտնվել ՀՀ կառավարության, Ազգային ժողովի հարակից տարածքներում՝ անկախ նշված վայրերում հավաքների անցկացումից: «Դիմադրություն» շարժման հավաքների և երթերի ընթացքում ծառայության են ներգրավվել ոստիկանության և ոստիկանության զորքերի գրեթե բոլոր ստորաբաժանումների, ինչպես նաև այլ մարզերի ոստիկանության վարչությունների ծառայողներ, ինչը երևում էր վերջիններիս համազգեստի տարբերանշաններից: Ոստիկանության իգական սեռի ծառայողներ ներգրավված են եղել միայն հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը տեղի ունեցած հավաքի ընթացքում, որին մասնակցում էին ծնողները՝ երեխաների հետ:

«Դիմադրություն» շարժման հունիսի 1-ին դեպի ՀՀ կառավարության նստավայր կազմակերպված երթը:

Պետական մարմինների նստավայրերի և վարչական շենքերի մոտ անցկացվող հավաքների և երթերի ընթացքում ոստիկանությունը, որպես կանոն, շղթա կազմելով մասնակիցներին պահում էր շենքերից որոշակի հեռավորության վրա: Հատկանշական է, որ ոստիկանությունը նույն կերպ էր վարվում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակի մոտ անցկացվող հավաքների և երթերի պարագայում: Օրինակ՝ ապրիլի 25-ին ՀՀԿ անդամներին ոստիկանության ծառայողները թույլ չտվեցին անցնել փողոցը և մոտենալ իշխող կուսակցության գրասենյակին, որի արդյունքում տեղի ունեցավ հրմշտոց, մասնակիցների մի մասը բերման ենթարկվեցին: Հարկ է նշել, որ կուսակցության գրասենյակը չի համարվում պետական պահպանության ենթակա օբյեկտ[30]:

Ձախ նկարում՝ ոստիկանության ծառայողները ՀՀ կառավարության նստավայրի առջև (մայիսի 24): Աջ նկարում՝ ոստիկանության ծառայողները «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակի առջև (ապրիլի 29):

[30] Տես ՀՀ նախագահի 29 ապրիլի 2004 թվականի N 1008-Ն որոշումը
https://www.arlis.am/documentview.aspx?docid=111131

Հաշվետու ժամանակահատվածում դիտարկվել են ոստիկանության կողմից իրավական ակտերի կամայական մեկնաբանության բազմաթիվ դեպքեր: Օրինակ՝ ապրիլի 29-ին Հանրապետության հրապարակում «Ազատագրական շարժում» նախաձեռնության կողմից անցկացվող հավաքի ընթացքում ոստիկանության ծառայողները թույլ չտվեցին ՀՀ փաստաբանների պալատի նախկին նախագահ Ա. Զոհրաբյանին մոտենալ Կառավարության նստավայրին՝ արգելքը հիմնավորելով Ոստիկանության մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի կիրառմամբ[31]: Նշված հոդվածը հետիոտնի շարժի սահմանափակման լիազորություն է նախատեսում միայն անձանց «կյանքի, առողջության կամ գույքի պաշտպանության ապահովման կամ քննչական և օպերատիվ հետախուզական գործողություններ կատարելու համար» և կիրառելի չէր վերը նշված հավաքի պարագայում: Մեկ այլ դեպքում՝ մայիսի 17-ին Տերյան փողոցի և Սայաթ-Նովայի պողոտայի խաչմերուկում անցկացվող հավաքի ընթացքում բերման էր ենթարկվել «Հայաստան» խմբակցության պատգամավոր Թադևոս Ավետիսյանը, թեև հավաքի մյուս մասնակիցները մի քանի անգամ ոստիկանությանը տեղեկացրել էին պատգամավորի անձեռնմխելիության մասին: Հավաքի վայրում գտնվող, նոր պարեկային ծառայության մայոր Ա. Իսախանյանը պնդում էր, որ Թ. Ավետիսյանին բերման են ենթարկել վարչական իրավախախտում կատարելու համար[32], ինչը ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածին: Մինչ այդ, մայիսի 2-ին Ամիրյան փողոցի և Մաշտոցի պողոտայի խաչմերուկին անցկացվող հավաքից բերման էր ենթարկվել նույն խմբակցության պատգամավոր Աշոտ Սիմոնյանը[33]

Ոստիկանների քանակը

Հաշվետու ժամանակահատվածում ոստիկանության ներգրավվածությունը հավաքների վարչարարությանը եղել է աննախադեպ մեծ: Կոմիտեի նախորդ մշտադիտարկման փուլի համեմատ[34], որտեղ առավել մեծ թվով հավաքների ընթացքում ներկա են գտնվել 30-ից մինչև 100 ոստիկան, ապրիլ-հունիս ամիսներին տեղի ունեցած հավաքների մեծ մասի պարագայում ոստիկանների թիվը մեծ է եղել 100-ից ավելի (44 հավաք): Նշված բոլոր հավաքները կազմակերպված են եղել «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունների կողմից, հիմնականում «Դիմադրություն» շարժման շրջանակներում: Առավել մեծ թվով ոստիկանության ծառայողներ են ներկա գտնվել հունիսի 3-ին անցկացված «Դիմադրություն» շարժման երթի ընթացքում՝ Դեմիրճյան-Պարոնյան փողոցների խաչմերուկի հատվածում (ավելի քան 550 ոստիկան): Ընդդիմության հիմնական հավաքների և երթերի ընթացքում ներգրավված ոստիկանության

---

[31] «*Ոստիկանները բռնի ուժ են կիրառում, մարդկանց տանում ոստիկանական բաժանմունքներ. ՈՒՂԻՂ*», 168.am, 29.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=L4t81a3Bl4Q

[32] «*Աժ պատգամավոր Թադևոս Ավետիսյանին ուժով խցկում են ոստիկանական մեքենան առանց տարբերանշանի ոստիկանները*», Yerkir Daily, 17.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=x2s-N9nWJgU

[33] «*Ոստիկանները բերման են ենթարկել «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աշոտ Սիմոնյանին*», News.am AM, 02.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=E8C6T3FdvFA
«*Բերման ենթարկվածների մեծ մասն ազատ արձակվեց*», Ազատություն Ռադիոկայան, 02.05.2022 թ., https://www.azatutyun.am/a/31830599.html

[34] Տես Հայաստանի Հելսինկյան կոմիտեի *Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում (նոյեմբեր-դեկտեմբեր 2021 թ.) զեկույցը*, էջ 21, https://bit.ly/3uQiVCA

ծառայողների թիվը միջինը եղել է 190 ոստիկան: Բացի բուն երթը ուղեկցող ոստիկանության ծառայողներից, հավելյալ ուժեր մշտապես տեղակայված են եղել պետական մարմինների նստավայրերի և վարչական շենքերի առջև և հարակից տարածքներում՝ որտեղով նախատեսվել է անցկացնել երթը: Օրինակ՝ շարժման առավել ակտիվ՝ ապրիլի 25-ից մինչև հունիսի 14-ը ընկած ժամանակահատվածում, ոստիկանության մեծաքանակ ուժեր մշտապես տեղակայված են եղել Հանրապետության հրապարակում՝ Կառավարության նստավայրի հարևանությամբ, ինչպես նաև ԱԺ նստավայրի հարակից տարածքում և այլ վայրերում: Հավաքների վարչարարությանը ներգրավված են եղել պարեկապահակետային ծառայության տարբեր ստորաբաժանումները, ոստիկանության զորքերը, ինչպես նաև ոստիկանության մարզային վարչությունների ծառայողները:

Ձախ նկարում՝ ոստիկանության ծառայողները պատրաստվում են ուղեկցել «Դիմադրություն» շարժման երթը Սասունցի Դավթի հրապարակից (ապրիլի 26): Աջ նկարում՝ ոստիկանության ծառայողները շղթա են կազմել ՀՀ կառավարության նստավայրի առջև (մայիսի 26):

Դիտարկված հավաքներից 34-ի պարագայում ոստիկանների թիվը տատանվել է 30-ից 100-ի սահմաններում: Դրանք, հիմնականում, նույնպես եղել են «Դիմադրություն» շարժման շրջանակներում կազմակերպված հավաքները, որոնց ընթացքում մասնակիցները առավոտյան ժամերին արգելափակում էին փողոցների երթևեկությունը:

Առավել քիչ թվով՝ շուրջ 28 հավաքների ընթացքում ոստիկանների քանակը չի գերազանցել 30-ը և միայն 4 հավաքի պարագայում ոստիկանության ներկայություն չի դիտարկվել:



Ոստիկանության սպառազինությունը

Չնայած ոստիկանության ծառայողների մեծ թվին, դիտարկված հավաքների մեծամասնության պարագայում ոստիկանության սպառազինությունը եղել է նվազագույն: «Դիմադրություն» շարժման շրջանակներում կազմակերպված մի քանի երթի ընթացքում ներգրավված ոստիկանության ծառայողները կրել են մահակներ, իսկ ոստիկանության զորքերի ստորաբաժանումները նաև վահաններ, սաղավարտներ, օրինակ՝ մայիսի 4-ին ԱԺ նստավայրի, մայիսի 11-ին և 31-ին Կառավարության 2-րդ մասնաշենքի, հունիսի 3-ին կառավարական առանձնատների մոտ անցկացված երթերի պարագայում:

Ոստիկանության զորքերի ծառայողները մայիսի 4-ին և հունիսի 3-ին անցկացված երթերի ժամանակ:

Մայիսի 4-ին Ազգային ժողովի նստավայրի ներքին տարածքի երկայնքով տեղադրված էին «Պլամյա» տեսակի լուսաձայնային նռնակներ, ներկա էին ինքնաձիգով զինված և դիմակավորված ԱԱԾ աշխատակիցներ և դիպուկահարներ: Նստավայրում ԱԺ-կառավարություն հարցուպատասխանին ներկա էր Ն. Փաշինյանը, իսկ նստավայրի առջև ընթանում էր «Դիմադրություն» շարժման հերթական հավաքը:



Մայիսի 4-ին Ազգային ժողովի նստավայրում տեղակայված դիպուկահարները, մուտքի առջև ինքնաձիգերով զինված ԱԱԾ աշխատակիցները և նստավայրի երկայնքով տեղադրված լուսաձայնային նռնակները:

Ոստիկանության ծառայողին անհատապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշանները կրելու խնդիրը շարունակում է մնալ արդիական: Դիտարկված բազմաթիվ հավաքների ընթացքում ոստիկանները չեն կրել տարբերանշաններ, ընդ որում խնդիրը առկա էր գրեթե բոլոր ստորաբաժանումների պարագայում: Դիտարկվել են դեպքեր, երբ ոստիկանության ծառայողների ողջ խմբի մոտ բացակայել են տարբերանշանները: Օրինակ՝ մայիսի 1-ին Ֆրանսիայի հրապարակում անցկացված «Դիմադրություն» շարժման հավաքի մասնակիցներ փորձեցին արգելափակել հրապարակի հարակից խաչմերուկները՝ այնտեղ տեղադրելով նստարաններ, աղբարկղեր և այլ առարկաներ: Ենթադրաբար՝ նախքան հակազդող գործողություններ իրականացնելը ոստիկանության զորքերի մի խումբ ծառայողներ հեռացրել էին իրենց տարբերանշանները:

Ձախ նկարում՝ ոստիկանության զորքերի ծառայողները մայիսի 1-ին Ֆրանսիայի հրապարակում անցկացված հավաքի ընթացքում՝ առանց տարբերանշանների: Աջ նկարում՝ ոստիկանության ծառայողը դիմակով ծածկում է դեմքը (ապրիլի 25):

Մայիսի 2-ի առավոտյան տեղի ունեցած բողոքի գործողությունների ընթացքում մասնակիցներին բերման ենթարկելու գործողություններին մասնակցել են դեմքն ամբողջությամբ ծածկող դիմակներով, առանց տարբերանշանի, ոստիկանական համազգեստ կրող անձինք[35]: Առանց համազգեստի ոստիկաններ ենթադրաբար ներկա են գտնվել հունիսի 3-ին Դեմիրճյան-Պարոնյան փողոցների խաչմերուկին անցկացված հավաքի ընթացքում[36]:

Միջամտություններ, անհամաչափ ուժի կիրառում և բռնություններ

Հաշվետու ժամանակահատվածը հավաքների ազատության իրավունքի համատեքստում առանձնացել է աննախադեպ միջամտություններով, ներառյալ՝ իրավապահների կողմից անհամաչափ ուժի և բռնությունների կիրառությամբ: Բոլոր դեպքերը տեղի են ունեցել «Դիմադրություն» շարժման հավաքների նկատմամբ:

Հավաքի մասնակիցներին բերման ենթարկելը եղել է քաղաքացիական անհնազանդության գործողությունների ընթացքում ոստիկանության կողմից կիրառած հիմնական ներգործության միջոցը: Մի շարք հավաքների պարագայում ոստիկանությունը որոշակի ժամանակ էր տվել մասնակիցներին՝ իրենց բողոքը արտահայտելու և երթևեկությունը վերականգնելու համար: Այլ դեպքերում ոստիկանության ծառայողները բերման էր ենթարկել ոչ միայն փողոցների երթևեկելի հատվածում գտնվող, այլև մայթերին կանգնած քաղաքացիներին:

Դիտարկված հավաքների ընթացքում մասնակիցներին առավել հաճախ բերման էին ենթարկում ոստիկանության այն ստորաբաժանումների ծառայողները, որոնք մինչ այդ ներգրավված չէին տվյալ հավաքի վարչարարությանը և, ըստ դիտարկման արդյունքների, ժամանում են հավաքի վայր բացառապես մասնակիցներին բերման ենթարկելու նպատակով: Դրանք, որպես կանոն, ՊՊԾ գնդի 3-րդ հատուկ գումարտակի և ոստիկանության զորքերի տարբեր ստորաբաժանումների ծառայողներն են: Վերջիններիս կողմից են իրականացվել առավել կոպիտ ուժի կիրառմամբ և բռնությունների գործադրմամբ միջամտությունները, բերման ենթարկվող մասնակիցների ընտրությունը հաճախ եղել է կամայական, ոչ թիրախային: Դիտարկվել են դեպքեր, երբ հավաքի մասնակիցները բերման են ենթարկվել փողոցի երթևեկելի հատվածը բացելիս և հավաքի փաստացի ավարտից հետո:

---

[35] «*Թեժ վիճակ. ոստիկանները ուժով բացեցին փողոցը և բերման ենթարկեցին ակցիայի մասնակիցներին*», a1plus, 02.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=hWvPU90uS9A
«*Կարմիր-բերետավորները եւ դիմակավորված ծառայողներն ուժով բացում են ճանապարհները*», NEWS AM, 02.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=4po6jeU1v90

[36] Տես հունիսի 3-ի միջադեպի վերաբերյալ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի առանձին զեկույցը, էջ 1, http://armhels.com/wp-content/uploads/2022/06/03%E2%80%A406%E2%80%A42022-1.pdf

ՊՊԾ գնդի 3-րդ հատուկ գումարտակի ծառայողները բերման են ենթարկում հավաքի մասնակցին, որը արդյունքում ստացավ դեմքի վնասվածք:

Անհամաչափ ուժի կիրառման դեպքերը սկսվել են ապրիլի 25-ից՝ «Դիմադրություն» շարժման բողոքի ցույցերի մեկնարկից: Նույն օրը Սայաթ-Նովայի և Չարենցի փողոցի խաչմերուկում ոստիկանությունը անհամաչափ ուժ է կիրառել ՀՀԿ կողմից կազմակերպված հավաքի մասնակիցների նկատմամբ, որոնք ցանկանում էին մոտենալ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակին: Գործողություններին մասնակցել են նաև քաղաքացիական հագուստով ոստիկաններ: Հաջորդ օրը՝ ապրիլի 26-ին, ոստիկանությունը բերման ենթարկեց ՀՅԴ ՀԵՄ կողմից Կոմիտասի պողոտայի և Գյուլբենկյան փողոցի խաչմերուկին անցկացված բողոքի ցույցի մասնակիցների մի մասին, որոնք անվադողերով արգելափակել էին պողոտայի երթևեկությունը: Հավաքի ավարտից հետո խաչմերուկի հարևանությամբ գտնվող ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության մոտ ժամանեցին ոստիկանության լրացուցիչ ուժեր և սկսեցին կոպիտ ուժի կիառմամբ մայթերից բերման ենթարկել երիտասարդներին, որոնք, իրենց կարծիքով, մասնակցել էին հավաքին:

Անհամաչափ ուժի կիրառման և բռնության դեպքերը շարունակվել են մայիս-հունիս ամիսներին: Մայիսի 2-ին Սայաթ-Նովայի պողոտայի և Աբովյան փողոցների խաչմերուկներում անցկացվող հավաքի մասնակցներին բերման ենթարկելիս ոստիկանության ծառայողը բռունցքով բազմաթիվ հարվածներ է հասցրել նրանցից մեկի գլխին[37]: Նույն հավաքի ընթացքում վատացել էր «Yerkir.am»-ի լրագրող Լիա Սարգսյանի ինքնազգացողությունը[38], ոստիկանության գործողությունների արդյունքում ֆիզիկապես տուժած քաղաքացիների վերաբերյալ մամուլում հրապարակվել էին այլ արժանահավատ վկայություններ[39]: Նույն օրը Բաղրամյան պողոտայի և Պռոշյան փողոցի խաչմերուկի մոտ

[37] «*Տասնյակ ոստիկաններ բռնի ուժի և ծեծի են ենթարկում անհնազանդության ակցիայի մասնակիցներին*», 168 Online, 02.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=YvMBgLFg4Vs
[38] «*Բողոքի ակցիա իրականացնողների և ոստիկանների միջև հրմշտոցի ժամանակ լրագրող Լիա Սարգսյանի ինքնազգացողությունը վատացել է*», 02.05.2022 թ., https://hetq.am/hy/article/144074
«*Հրշմտոցի ժամանակ լրագրող վատացավ*», ArmLurTV, 05.02.2022 թ., https://www.youtube.com/watch?v=_9Hv0Z1m1C8
[39] «*Ոստիկանությունը բիրտ ուժ է կիրառում*», a1plus, 02.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=ppRzh0e_cwI
«*Անհնազանդության ակցիայի ընթացքում ցուցարարը վնասվածք ստացավ*», NEWS AM, 02.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=ANz700qptjM

ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետ Սարգիս Հովհաննիսյանը և իր աշխատակիցը բռնություն են կիրառել MediaHub լրատվամիջոցի լրագրողի և օպերատորի նկատմամբ, խոչընդոտել վերջիններիս կողմից հավաքների լուսաբանման գործողությունները[40]:

Ոստիկանները բերման են ենթարկում մայիսի 6-ին Մաշտոցի պողոտայի և Արգիշտիի փողոցի խաչմերուկում քաղաքացիական անհնազանդություն իրականացնող ցուցարարներին:

Մայիսի 10-ին անհամաչափ ուժի և բռնությունների կիրառման դեպքեր են դիտարկվել «Դիմադրություն» շարժման երթի ընթացքում, երբ մասնակիցները արգելափակել էին Ռուբինյանց և Պարույր Սևակի փողոցների խաչմերուկի երթևեկությունը: Ոստիկանության ծառայողները բռնություն են կիրառել կին ցուցարարի նկատմամբ, ինչպես նաև կոպիտ կերպով խոչընդոտել հավաքի մեկ այլ մասնակցի կողմից իրենց գործողությունների տեսանկարահանումը[41]: Հավաքի ընթացքը լուսաբանող լրատվամիջոցներից մեկի եթերում արձանագրվել է, թե ինչպես է ոստիկանության զորքերի ծառայողը թքում բերման ենթարկվող ցուցարարի վրա[42]: Ոստիկանի նկատմամբ նշանակվել է ծառայողական քննություն[43]:

Միջադեպեր տեղի են ունեցել բազմաթիվ այլ հավաքների ընթացքում: Մայիսի 17-ին ոստիկանության գործողությունների հետևանքով ձեռքի կոտրվածքներ են հավաքների մասնակիցներ Միեր Ստեփանյանը[44], 77-ամյա Ջուլիետա Հովհաննիսյանը[45]: Մայիսի 18-ին կոպիտ, անհամաչափ ուժի գործադրմամբ ոստիկանները փորձել են բերման ենթարկել

---

[40] «*Ասա թող խելոք պահի, բերանը...ՊՊԾ պետ Սարգիս Հովհաննիսյանը ոտքով հարվածում է MediaHub-ի աշխատակցին*», MediaHubTV, 02.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=ceiXpP1vRGU
[41] «*Ոստիկաններն անհամաչափ ուժ են կիրառում աղջիկ ցուցարարի նկատմամբ*», ParaTV, 10.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=jc6k6c1tA7E
[42] «*Սև բերետավորը թքում է ցուցարարի վրա*», ParaTV, 10.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=9tNK0xATkXA
[43] «*«Այդ ոստիկանի նկատմամբ ծառայողական քննություն է նշանակվել». Արամ Վարդևանյանը՝ ցուցարարի վրա թքած ոստիկանի մասին*», Առավոտ, 11.05.2022 թ., https://www.aravot.am/2022/05/11/1267075/
[44] Տես փաստաբան Ա. Մակինյանի գրառումը https://www.facebook.com/amram.makinyan/posts/pfbid02vqbFE8S9JGpsbiWS6ZRu7MFFKweCn7iCrMLmmokDWcDxTQU2gcHLb4MhjWRvd4EKl
[45] «*77-ամյա կինը պնդում է՝ ոստիկաններն են իրեն հրել, գետնին գցել, որի ժամանակ էլ թևը կոտրել է*», Ազատություն ռադիոկայան, 18.05.2022 թ., https://www.azatutyun.am/a/31856394.html

«Հայաստան» դաշինքի պատգամավոր Ա. Մինասյանին[46]: Արձանագրվել են դեպքեր, ոստիկանները հավաքի մասնակիցների նկատմամբ օգտագործել են կոպիտ[47], հայհոյախառը բառամթերք[48]:

ՀՀ կառավարության 3-րդ մասնաշենքի առջև մայիսի 30-ին «Դիմադրություն» շարժման հերթական հավաքի ընթացքում տեղի ունեցան բազմաթիվ միջադեպեր մասնակիցների և ոստիկանության միջև: Հավաքի ղեկավարները ցանկանում էին մտնել մասնաշենք գտնվող նախարարներին հարց ուղղել, թե արդյո՞ք նրանք կողմ են Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելուն: Ոստիկանությունը արգելեց հավաքի մասնակիցներին մուտքը մասնաշենք, որից որոշ ժամանակ անց վերջիններս փորձեցին ճեղքել ոստիկանական շղթան և մուտք գործել: Սկսված հրմշտոցի ընթացքում ոստիկանությունը առավել կոպիտ ուժի գործադրմամբ բերման էր ենթարկում հավաքի մասնակիցներին՝ նրանց գցելով գետնին, հարվածներ հասցնելով և քաշաշելով: Լրատվամիջոցներում տարածված տեսանյութերից մեկում երևում է, թե ինչպես է ոստիկանը բարձրացնում և գետնին շպրտում հավաքի մասնակիցներից մեկին[49]: Հավաքի մեկ այլ մասնակից հետագայում հայտնել էր, որ մասնաշենքում գտնվելու ընթացքում ոստիկանները իրենց ձեռքերը շղթայել են, գցել գետնին և ծեծի ենթարկել, ինչի արդյունքում ցուցարարը ստացել է կողերի կոտրվածք[50]: Հավաքի ընթացքում ոստիկանները փորձել են բերման ենթարկել նաև «Երկիր» կայքի խմբագիր Վահե Գրիգորյանին, սակայն, որոշ ժամանակ անց ազատ արձակել ոստիկանական միկրոավտոբուսից[51]: Միջադեպից հետո հավաքի վայրում տեսանելի էին պատառոտված հագուստով և վնասվածքներով քաղաքացիներ:

Հունիսի 3-ին «Դիմադրություն» շարժման երթի ընթացքում կիրառված բռնությունները աննախադեպ էին տևական ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման արդյունքների համեմատ: Ֆրանսիայի հրապարակից մեկնարկած երթը, որի մասնակիցները ժամանակավորապես շրջարգելափակել էին ՀՀ կառավարության նստավայրը, ժամը 20:10-ին մոտեցավ կառավարական առանձնատներ տանող ճանապարհի մուտքին՝ Դեմիրճյան-Պարոնյան փողոցների խաչմերուկին: Ոստիկանությունը բազմաշարք շղթայով նախապես արգելափակել էր ինչպես առանձնատներ տանող ճանապարհի մուտքը, այնպես էլ Դեմիրճյան փողոցը: Թեև երթերի ընթացքում դեպի առանձնատներ ճանապարհը փակվում էր ոստիկանության կողմից՝

[46] «*Պատգամավոր Արծվիկ Մինասյանին երկու անգամ բռնի ուժով նստեցրել են ոստիկանական մեքենա*», 5-րդ ալիք, 18.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=_axe7Pho9JY
[47] https://www.facebook.com/sanan.db.7/videos/524966496023354/
[48] «*Ազատամարտիկին բերման ենթարկող ոստիկանը հայհոյում էր*», Երկիր Մեդիա, 16.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=YmXh__mQaUc
[49] «*Ոստիկանը դաժանությամբ գետնին է տապալում քաղաքացուն*», News.am, 30.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=BFfQ3cI7eUw
[50] «*«Ձեռնաշղթաները մեր ձեռքերին, գցած գետնին, ոստիկաններից անցնում-դառնում, խփում էին». ակցիայի մասնակից*», Ազատություն ռադիոկայան, 30.05.2022 թ., https://www.azatutyun.am/a/31875149.html
[51] «*Բախումներ ոստիկանների ու ցուցարարների միջև, կան բերման ենթարկվածներ. Լուսանկարներ*», Sputnik Armenia, 30.05.2022 թ., https://armeniasputnik.am/20220530/bakhumner-vostikanneri-u-cucararneri-mijev-kan-berman-entarkvatsner-42607901.html

սահմանված պահպանության հատուկ կարգի պատճառով[52], Դեմիրճյան փողոցը մշտապես բաց է եղել նախորդ ժամանակահատվածում և հետագայում անցկացված երթերի համար: Հավաքի ղեկավար Ի. Սաղաթելյանը ոստիկանությունից պահանջեց բացել ճանապարհը և հայտնեց, որ հակառակ պարագայում երթը փորձելու է ճեղքել ոստիկանության շղթան և շարունակել ընթացքը Դեմիրճյան փողոցով: Ոստիկանությունը ճանապարհը չբացեց և հավաքի մասնակիցները փորձեցին ճեղքել շղթան: Արդյունքում տեղի ունեցավ բախում:

Ընդհարում հավաքի մասնակիցների և ոստիկանության միջև:

Ոստիկանության ծառայողները կիրառում էին անհամաչափ ուժ ինչպես տղամարդկանց, այնպես հավաքին մասնակցող կանանց նկատմամբ՝ վերջիններիս բերման ենթարկելով: Հավաքի վայրում կատարված տեսագրություններում երևում է միաժամանակ մի քանի ոստիկանի կողմից առնվազն 8 ցուցարարի ծեծի ենթարկելու դրվագներ՝ ինչպես քաշքշուկի ընթացքում, այնպես էլ բերման ենթարկելիս[53]:

Ոստիկանության ծառայողները ծեծի են ենթարկում հավաքի մասնակիցներին

Միջադեպի ընթացքում հավաքի մասնակիցները ոստիկանների ուղղությամբ նետում էին պլաստիկ շշեր և այլ առարկաներ, որոնք, ոստիկանների կողմից, նաև ետ էին շպրտվում

[52] Տես ՀՀ վարչապետ 15 ապրիլի 2019 թվականի N 403-Լ որոշումը, https://www.arlis.am/documentview.aspx?docID=129726
[53] Ծեծի դրվագները միացված մեկ տեսանյութում տես հետևյալ հղումով՝ https://drive.google.com/file/d/1dPY7nKChQ8TnS4scaRGSkRXUDC83s2Vg/view?usp=sharing

մասնակիցների ուղղությամբ: Հավաքի ընթացքում ոստիկանությունը, առաջին անգամ 2018 թ. ի վեր, կիրառեց լուսաձայնային նռնակներ, որոնցից առաջինը պայթեց կառավարական առանձնատուն տանող ճանապարհի՝ մուտքից աջ գտնվող լուսացույցի մոտ, որտեղ շղթա կազմած կանգնած էին ոստիկանության ծառայողները: Մյուս նռնակները պայթեցին օդում՝ զգալի բարձրության վրա[54]: Միջադեպի ավարտից հետո հավաքի վայրում տեսանելի էին պատառոտված հագուստով, դեմքի և մարմնի այլ մասերի վնասվածքներով բազմաթիվ քաղաքացիներ: Ըստ ոստիկանության հայտարարության՝ հավաքի վայրից տարբեր բժշկական հաստատություններ են տեղափոխվել ոստիկանության 34 ծառայող և 16 քաղաքացիական անձ: Բերման է ենթարկվել 11 անձ, հարուցվել է զանգվածային անկարգության հիմքով քրեական գործ[55]:

Ոստիկանության ծառայողը մշակում է հավաքի մասնակցի գլխի վերքը:

Հունիսի 6-ին ոստիկանության կողմից տարածված տեսագրության մեջ նշվել էր դրվագ, որում հավաքի մասնակիցներից մեկը, մուրճի հիշեցնող առարկայով փորձում էր հարվածել ոստիկանության ծառայողներին[56]: Հավաքի մասնակիցը ձերբակալվել էր: Մի քանի օր անց համացանցում տարածվեց դրվագի մեկ այլ տեսանյութ, որտեղ երևում էր, թե ինչպես է ոստիկանության ծառայողը, խլելով մուրճի նմանվող առարկան հավաքի մասնակցի ձեռքից, դրանով հարվածներ հասցնում հավաքի մասնակցին[57]:

Չնայած ոստիկանության կողմից կիրառված աննախադեպ բռնություններին՝ տարբեր պետական պաշտոնյաների, քաղաքական ուժերի, ինչպես նաև հասարակության այլ անդամների կողմից 2022 թ. հունիսի 3-ին տեղի ունեցած իրադարձությունները ներկայացրեցին խիստ միակողմանի: Իշխող «Քաղաքացիական պայմանագիր»

---

[54] Հունիսի 3-ի միջադեպի վերաբերյալ առավել մանրամասն տես Հայաստանի Հելսինկյան կոմիտեի առանձին զեկույցը հետևյալ հղումով՝
http://armhels.com/wp-content/uploads/2022/06/03%E2%80%A406%E2%80%A42022-1.pdf
[55] Տե՛ս ՀՀ ոստիկանության 03.06.2022 թ. հայտարարությունը, https://www.police.am/news/view/hayt030622.html
[56] «*Զանգվածային անկարգության դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ. կան ձերբակալվածներ*», ՀՀ ոստիկանություն, 06.06.2022 թ., https://www.youtube.com/watch?v=OcYHoAwB6Ms
[57] «*Ոստիկանը խլում է քաղաքացու ձեռնափայտն ու հարվածներ հասցնում ցուցարարներին*», Antifake TV09.06.2022 թ., https://www.youtube.com/watch?v=Qg8iKe2oLdI

կուսակցության պատգամավորները հավաքը համարել էին ոչ խաղաղ, ցուցարարներին անվանել «ագրեսիվ զանգված», «խուլիգաններ» և այլն[58]: Թեև հավաքի մասնակիցների կողմից փորձ արվեց ուժ կիրառելով ճեղքել ոստիկանության շղթան, **նման գործելաոճը նոր չէր Հայաստանում տեղի ունեցած հավաքների պարագայում և բավարար չէր հավաքը ոչ խաղաղ որակելու համար**: Հայաստանի Հելսինկյան կոմիտեն հարկ է համարում մեջբերել 2018 թ. ապրիլի 16-ին Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած հավաքի դիտարկումների արդյունքներից հատված, որոնք ամբողջությամբ հասանելի են Կոմիտեի զեկույցում[59]:

2018 թ. ապրիլի 16-ին Բաղրամյան պողոտայում Ն. Փաշինյանը առաջնորդում էր հավաքը և ոստիկանության կողմից կազմած պատնեշին մոտենալուց հետո հայտարարեց՝ «մենք՝ Ազգային ժողովի չորս պատգամավորներս, ձեր ուղեկցությամբ, հիմա գնալու ենք մեր աշխատանքի վայրը»: Այնուհետև, հավաքի մասնակիցները փորձեցին ճեղքել ոստիկանության պատնեշը: Ընդհարման ընթացքում որոշ հավաքի մասնակիցներ ձեռքերով պահում էին ոստիկանների պարզած մահակները, հրում վահանները, տեղափոխում ցանկապատերը: Հավաքի մասնակիցներից մեկը ոստիկանների ուղղությամբ նետեց աղբարկղում գտնվող աղբով լի տոպրակ: Մի քանի այլ մասնակիցներ ոստիկանության ծառայողներից խլեցին վահաններ և մահակներ, հրում էին ոստիկաններին: Դիտարկվել են փոխադարձ հարվածներ և հայհոյանքներ: Այնուհետև ոստիկանությունը հավաքիմասնակիցների նկատմամբ կիրառեց լուսաձայնային նռնակներ:

Վկայակոչված գործողությունները հստակ տեսանելի են հավաքի ընթացքը լուսաբանած ՁԼՄ-ների տեսանյութերում[60]:

Հետապնդումներ և քրեական գործեր

Հունիսի 6-ին «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ի. Սաղաթելյանը հայտնեց, որ պաշտոնական տվյալներով ապրիլի 25-ից ի վեր բերման է ենթարկվել «Դիմադրություն» շարժման ավելի քան 2100 մասնակից, ձերբակալվել 48-ը, որոնցից 24-ը կալանավորվել են: Ըստ Ի. Սաղաթելյանի՝ բերման ենթարկվածների թիվը իրականում մոտ 2500 է, քանի որ ոչ բոլոր դեպքերում են ոստիկանությունում կազմվել անհրաժեշտ փաստաթղթերը[61]: Ոստիկանության հաղորդմամբ միայն մայիսի 17-ին բերման էին ենթարկվել Երևանում

---

[58] «*«Ոստիկանների նկատմամբ կիրառված բռնությունը չունի որևէ արդարացում». ՔՊ-ականները պաշտպանել են ոստիկանության գործողությունները*», Առավոտ, 04.06.2022 թ., https://www.aravot.am/2022/06/04/1272285/

[59] «*ՁԵԿՈՒՅՑ 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների և հավաքների դիտորդության վերաբերյալ*», Հայաստանի Հելսինկյան կոմիտե, 26.07.2018 թ., էջ 29-30, https://bit.ly/3mg1RkJ

[60] Վկայակոչված գործողությունների նշումներով տեսանյութը՝ https://drive.google.com/file/d/1cVJvZB8e0-zyjQ2d53WowD9N9miOUHmp/view?usp=sharing
Աղբյուրը՝ «*Բախում. Փաշինյանը փորձում է անցնել ոստիկանական փշալարի վրայով (երկար տարբերակ)*», Ազատություն Ռադիոկայան, 16.04.2018 թ., https://www.youtube.com/watch?v=ppoATJzfXOM

[61] «*Մինչ օրս Դիմադրության շարժման ավելի քան 2100 մասնակից բերման է ենթարկվել Ոստիկանության բաժանմունքներ. Իշխան Սաղաթելյան*», News.am 06.06.2022 թ., https://news.am/arm/news/705799.html

անցկացված քաղաքացիական անհնազանդության ակցիաների 414 մասնակից[62]: Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով նախագահ Անդրանիկ Քոչարյանը մայիսի 4-ին գրառում էր կատարել, ենթադրելով, որ հավաքների ընթացքում բերման ենթարկվածները «եռամսյա վարժական հավաքներից և պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած կոնտինգենտն է» և կոչ էր արել ոստիկանությանը և ԱԱԾ-ին նրանց տվյալները փոխանցել Պաշտպանության նախարարությանը՝ որպեսզի նրանք ներգրավվեն սահմանին «պաշտպանական խնդիրների լուծման հարցում»[63]: Հավաքների ազատության իրավունքի իրացման համատեքստում մի շարք ընդդիմադիրների նկատմամբ քաղաքական հետապնդումների համատեքստում հարկ է դիտարկել հետևյալ օրինակները, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակահատվածում:

Հետապնդումների օրինակներ

Ավետիք Չալաբյան

Մայիսի 12-ին, իր տանը կատարված խուզարկությունից անմիջապես հետո ձերբակալվեց, այնուհետև՝ կալանավորվեց «5165» շարժման անդամ Ավետիք Չալաբյանը: Վերջինս մեղադրվում էր քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հիմքով՝ մայիսի 9-ին տարածված ձայնագրության առթիվ[64]: Ըստ մեղադրանքի՝ Ա. Չալաբյանը ընդդիմության հավաքներին մասնակցելու համար Ազգարային համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ Թոռնիկ Ալիյանի միջոցով փորձել է նյութապես շահագրգռել ուսանողներին՝ ընդդիմության հավաքներին մասնակցության համար[65]: Քրեական օրենսգրքի հիշյալ հոդվածը, որը պատասխանատվություն է սահմանում *հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու* համար[66], ավելացվել էր ՀՀ քրեական օրենսգրքում 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ: Ըստ հեղինակների՝ հոդվածի նպատակը քողարկված ընտրակաշառքների դեմ պայքարն էր[67]: Հայաստանի Հելսինկյան կոմիտեն 2022 թ. մայիսի 14-ին հրապարակված հրատապ զեկույցում անդրադարձել էր 163-րդ հոդվածի խնդրահարույց կողմերին և դրա՝ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված Խաղաղ հավաքների

---

[62] «*Բերման ենթարկվածների թիվը հասավ 414-ի*», Ազատություն ռադիոկայան, 17.05.2022 թ., https://www.azatutyun.am/a/31854284.html

[63] «*Անդրանիկ Քոչարյանն առաջարկում է ակցիաներից բերման ենթարկված քաղաքացիներին ուղարկել սահման*», Ազատություն ռադիոկայան, 05.05.2022 թ., https://www.azatutyun.am/a/31836031.html
«*Լավ պատրաստված երիտասարդություն ունենք, պետք է այդ ռեսուրսը փոխանցել ՀՈՒ- ին. Քոչարյանը՝ հանրահավաքի մասնակիցների մասին*», Արմենպրես, 05.05.2022 թ., https://www.armenpress.am/arm/news/1082474.html

[64] «*Քննչական կոմիտեն՝ Չալաբյանի ձերբակալման մասին*», News.am, 12.05.2022 թ., https://news.am/arm/news/701518.html

[65] «*Նյութապես շահագրգռել է՝ քաղաքական ընդդիմության հավաքներին ուսանողների մասնակցության համար*», Քննչական կոմիտե, 12.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=egR4pSk-seE

[66] Օրենքի փոփոխության նախագիծը տե՛ս ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքում, http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=62251&fbclid=IwAR3Jr6agoMTyjp45h4bOUUTJVMbxFTzTlsdzE2KwsLvHC-E5iJW_kwmSuU

[67] «*Ընտրախախտումների համար պատիժները խստացնող օրինագծերի փաթեթը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվեց*», Ազատություն ռադիոկայան, 28.04.2021 թ., https://www.azatutyun.am/a/31227130.html

ազատության ուղեցույցի միջև հակասություններին[68]: Ըստ Ուղեցույցի՝ *հավաքներին մասնակցության խրախուսումը չպետք է իրավական կարգավորման ենթարկվի, քանի դեռ նման խրախուսանքի տրամադրումը չի հակասում* ***օրենքով նախընտրական քարոզչության ֆինանսավորման վերաբերյալ սահմանված, համաչափ սահմանափակումներին***[69], մինչդեռ հաշվետու ժամանակահատվածում անցկացված հավաքները կապ չեն ունեցել նախընտրական քարոզչության հետ: Հատկանշական է, որ որոշ երկրներում անգամ գործում են կազմակերպություններ, որոնք գումարի դիմաց տրամադրում են ցուցարարների ծառայություններ, ինչպես ԱՄՆ-ում գործող *Crowds on demand* կազմակերպությունը[70]:

Հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու հանցակազմը ի սկզբանե նախատեսված չէր նոր քրեական օրենսգրքով, որը երկար տարիներ գտնվում էր մշակման փուլում և պետք է ուժի մեջ մտներ 2022 թ. հուլիսի 1-ից: Այդ պարագայում արարքը, որի մեջ մեղադրվում էր Ա. Չալաբյանը, պետք է ապաքրեականացվեր: Նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելու ժամկետին ընդառաջ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը փոփոխություններ կատարեց դրանում՝ նոր օրենսգրքի 236-րդ հոդվածում ներառելով հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու հանցակազմը, որի պատճառով Ա. Չալաբյանի նկատմամբ քրեական հետապնդումը չդադարեց և արարքը չապաքրեականացվեց: Ըստ Ա. Չալաբյանի պաշտպան Վ. Հարությունյանի՝ քրեական գործի նախաքննությունը, միջնորդությունների քննությունը անցել են բազմաթիվ խախտումներով, իսկ Ա. Չալաբյանին մեղսագրվող արարքը նախատեսող նախկինում՝ 163-րդ, նոր օրենսգրքով՝ 236-րդ հոդվածի համապատասխան մասի հիմքով ազատությունից զրկված այլ անձ Հայաստանում առկա չէ:

Իգոր Խաչատուրով

Մայիսի 17-ին Կիևյան փողոցում տեղի ունեցած քաղաքացիական անհնազանդության ակցիայի ժամանակ ձերբակալվել, իսկ հաջորդ օրը կալանավորվել էր ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ Յ. Խաչատուրովի որդին՝ Իգոր Խաչատուրովը: ՀՀ քննչական կոմիտեի հաղորդմամբ վերջինիս քրեական մեղադրանք էր առաջադրվել «ՀՀ ոստիկանության աշխատակցի օրինական պահանջին չենթարկվելու և նրա նկատմամբ բռնություն գործադրելու» համար[71]: Ըստ Ի. Խաչատուրովի պաշտպան Միհրան Պողոսյանի՝ վերջինիս կալանավորման հիմքում դրված էր միայն մեկ ոստիկանի կողմից

[68] Տես *Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում (ապրիլ-մայիս 2022 թ.) հրատապ զեկույցը*, էջ 12-14, https://bit.ly/3Pga6ue
[69] *Խաղաղ հավաքների ազատության ուղեցույց (3-րդ հրատ.)*, Վենետիկի հանձնաժողով և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, CDLAD(2019)017, 52-րդ պարբերություն,
[70] Տե՛ս կազմակերպության կայքը, https://crowdsondemand.com/
[71] «*Իգոր Խաչատուրովի կալանավորման միջնորդությունը բավարարվել է*», Ազատություն ռադիոկայան, 20.05.2022 թ., https://www.azatutyun.am/a/31859381.html

տրված ցուցմունք[72], իսկ գործին կցված տեսանյութը միայն ապացուցում է իր պաշտպանյալի անմեղությունը[73]:

Արմեն Գրիգորյան

2022 թ. մայիսի 18-ին կալանավորվել էր պրոդյուսեր Արմեն Գրիգորյանը՝ 2021 թ. ապրիլին եթերում հնչեցված արտահայտությունների համար հարուցված քրեական գործով՝ դեպքից ավելի քան մեկ տարի անց: Ըստ ԱԱԾ-ի՝ վերջինս մեղադրվում էր նրանում, որ հարցազրույցի ընթացքում «հրապարակայնորեն նվաստացրել է Շիրակի և Արարատյան դաշտավայրերի բնակչության ազգային արժանապատվությունը և մտացածին գաղափարներով կասկածի տակ դրել նրանց էթնիկ ծագումնաբանությունը»[74]: ԱԱԾ-ն իր հաղորդման մեջ նաև տարածել էր դիմակավորված աշխատակիցների կողմից Ա. Գրիգորյանին ձերբակալելու տեսանյութը: Կալանքի ընթացքում Ա. Գրիգորյանի հետ տեսակցությունները փաստացի արգելված էին[75]: Մոտ երկու ամիս անց՝ հուլիսի 15-ին Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, կալանքի փոփոխման հարցով հրավիրված նիստի ընթացքում Ա. Գրիգորյանը մահացավ[76]:

Ա. Գրիգորյանը հայտնի էր Արցախի հարցում Ն. Փաշինյանի և իշխող խմբակցության նկատմամբ սուր քննադատությամբ, ինչպես նաև ակտիվորեն մասնակցում էր «Դիմադրություն» շարժման հավաքներին և երթերին[77]: Ա. Գրիգորյանի մահվանից հետո վերջինիս պաշտպան Ռուբեն Մելիքյանը մեջբերեց 2022 թ. մայիսի 18-ին կալանավորման միջնորդությունից հատված, պնդելով, որ Ա. Գրիգորյանին կալանավորելու բուն պատճառը ընդդիմության հավաքներին մասնակցելն էր: Նախաքննության մարմնի կողմից ներկայացված կալանավորման միջնորդությունից մեջբերված հատվածը հետևյալն էր.

«Արմեն Գրիգորյանը իր հայտարարությունները հնչեցրել է Ֆրանսիայի հրապարակում, երբ հավաքվածների մեծամասնության շրջանում հնչում են պաշտոնատար անձանց նկատմամբ հակաօրինական արարքներ կատարելու, անձանց նկատմամբ բռնություն գործադրելու կոչեր և նման պայմաններում Արմեն Գրիգորյանի գաղափարները ու հայացքները, ինչին ակնհայտորեն ձգտել է վերջինս, կարող են հանգեցնել անդառնալի

---

[72] «*«Ինչ-որ մի հիվանդ ուղեղում ծնվել է միտք, որ Իգոր Խաչատուրովին պետք է կալանավորել». Միհրան Պողոսյան*», 168 ժամ, 31.05.2022 թ., https://168.am/2022/05/31/1713148.html

[73] «*Իգոր Խաչատուրովն ազատ կարձակվի 1 մլն դրամ գրավի դիմաց*», Հետք, 11.07.2022 թ., https://www.hetq.am/hy/article/146424

[74] «*Ազգային արժանապատվությունը նվաստացնող դեպքերը ՀՀ ազգային անվտանգության ծառայության տեսադաշտում (տեսանյութ)*», ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, 17.05.2022 թ., https://bit.ly/3c8bMqL

[75] «*«...Որպեսզի Արմենն այս մարդասպան իշխանության վերջին զոհը դառնա»*», Panorama.am, 15.07.2022 թ., https://www.panorama.am/am/news/2022/07/15/%D4%B1%D6%80%D5%B4%D5%A5%D5%B6-%D4%B3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6/2707789

[76] «*Պրոդյուսեր Արմեն Գրիգորյանը հանկարծամահ է եղել*», Ազատություն ռադիոկայան, 15.07.2022 թ., https://www.azatutyun.am/a/31945371.html

[77] «*Նիկո՛լ, էս արդեն վերջն ա. տե՛ս. Արմեն Գրիգորյան*», Հայելի, 06.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=lHq41oDXUZ8

հետևանքների: Հետևաբար գտնում եմ, որ այլ խափանման միջոցները ի զորու չեն ապահովել մեղադրյալ Արմեն Գրիգորյանի վարքագիծը նախաքննության փուլում[78]*»*

Այլ միջադեպեր հավաքների և երթերի ընթացքում

Դիտարկված հավաքների ընթացքում տեղի են ունեցել մի շարք միջադեպեր ընդդիմադիր հավաքների մասնակիցների և մերձիշխանական կամ իշխանամետ հայացքներ ունեցող քաղաքացիների միջև: Դիտարկված գրեթե բոլոր դեպքերում, երբ ոստիկանության ներկայացուցիչը պատշաճ միջամտություն է դրսևորել՝ հեռացնելով նման անձանց հավաքի կամ երթի հարակից վայրից, լարվածությունը թուլացել է:

Ոստիկանության ծառայողը քաղաքացուն հորդորում է վիճաբանության մեջ չմտնել երթի մասնակիցների հետ (մայիսի 24):

Այուհանդերձ, ոստիկանության ծառայողների կողմից ընդդիմության բազմամարդ երթերի ուղեկցությունը հաճախ կազմակերպվում էր ոչ արդյունավետ. ոստիկանության ծառայողները, որպես կանոն, առավել խիտ շարքով ուղեկցում են երթը տվյալ պահին փողոցի ազատ երթևեկելի հատվածի կողմից, մինչդեռ մայթեզրի շփման հատվածում

[78] «*Մարդասպանին փնտրեք դատախազի, քննիչի, դատավորի, նրանց պատվեր տվողի մեջ. Ռուբեն Մելիքյան*», News.am, 15.07.2022 թ., https://www.youtube.com/watch?v=TLbnhwZe7_4

ոստիկանության ծառայողներ ավելի քիչ են լինում: Երթի մասնակիցների և մայթեզրին գտնվող առանձին քաղաքացիների միջև երբեմն տեղի են ունենում վիճաբանություններ:

Ձախից՝ ոստիկանության ծառայողները ուղեկցում են Բաղրամյան պողոտայով մայիսի 5-ին անցնող երթը: Աջից՝ մայիսի 11-ի երթը անցնում է Մաշտոցի պողոտայի կանգառներից մեկի կողքով:

Ապրիլի 26-ին ՀՀ վարչապետին ուղեկցող ավտոշարասյան մեքենաներից մեկը Լեոյի փողոցում վրաերթի էր ենթարկել 28-ամյա հոի կնոջը, որը տեղում մահացել էր[79]: Իրադարձությունը առաջացրել էր հանրության ստվար հատվածի զայրույթը, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ շարասյունը կանգ չէր առել տուժածին օգնություն ցույց տալու համար[80]: Քննադատություններին արձագանքել էր ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանը, պնդելով, որ ըստ «աշխատանքի միջազգայնորեն ընդունված կանոնակարգի՝ երկրների ղեկավարների շարասյունը ուղեկցող (տվյալ դեպքում՝ ՃՈ) մեքենաներն իրավունք չունեն չնախատեսված տեղում կանգ առնելու՝ անգամ պատահարների դեպքում»[81]: ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանը, սակայն, լրագրողների հետ հանդիպման ընթացքում հայտնել էր, որ «ամբողջ աշխարհում պետական պաշտոնյաներին ուղեկցող ծառայությունների գործառույթը չընկալվածության հարց ունի», ՀՀ-ում դրա կարգավորում առկա չէ, ինչպես նաև ափսոսանք էր հայտնել, որ ուղեկցող ծառայությունը կանգ չի առել կնոջը օգնություն ցույց տալու համար[82]: Դեպքի հաջորդ օրը, ընդդիմության հերթական երթի ընթացքում, մասնակիցները մոմավառություն իրականացրեցին վրաերթի վայրում: Այդ ընթացքում հավաքի որոշ մասնակիցները նկատեցին «Անտարես մեդիա հոլդինգի» հիմնադիր-տնօրեն Արմեն Մարտիրոսյանին և սկսեցին հայհոյել վերջինիս, ջրի պլաստիկ շշեր նետել նրա

[79] «*Երիտասարդ կնոջը վրաերթի ենթարկած ոստիկանության մայորն ազատ է արձակվել*», Ազատություն, 29.04.2022 թ., https://www.azatutyun.am/a/31827643.html
[80] «*Ուշադրություն. դաժան տեսարան՝ հրապարակվել է հոի կնոջը վրաերթի ենթարկելու պահի տեսագրությունը*», Armenia TV news, 27.04.2022 թ., https://www.youtube.com/watch?v=DG1wToBjzkY
[81] «*Տարոն Չախոյան. «Վարչապետը չի իմացել, որ ՃՈ ուղեկցող ավտոմեքենան է վրաերթի ենթարկել կնոջը»*», Հետք, 27.04.2022 թ., https://hetq.am/hy/article/143913
[82] «*Մի պաշտպանը ցավ է հայտնում, որ ՀՀ վարչապետին ուղեկցող ծառայությունը չի կանգնել ու փորձել ավտովթարի ենթարկված հոի կնոջն օգնություն ցուցաբերել*», Առավոտ, 03.05.2022 թ., https://www.aravot.am/2022/05/03/1265121/

ուղղությամբ, իսկ մասնակիցներից մի քանիսը քաշքշեցին և հարվածներ հասցրեցին[83]: Ոստիկանության ծառայողները, ինչպես նաև երթի կազմակերպիչներից «Հայաստան» դաշինքի պատգամավոր Արամ Վարդևանյանը և մասնակիցներից ոմանք միջամտեցին՝ կանգնելով Ա. Մարտիրոսյանի և երթի միջև, պահանջելով մասնակիցներից չմոտենալ վերջինիս: Հաջորդ օրը ՀՀ ոստիկանությունը հայտնեց, որ միջադեպի հետ կապված հարուցվել է քրեական գործ՝ խուլիգանության հիմքով և կալանավորվել է մեկ անձ[84]: Արմեն Մարտիրոսյանը հանրության շրջանում սուր քննադատության էր արժանացել 44-օրյա պատերազմի ավարտից հետո կատարած ֆեյսբուքյան գրառման պատճառով, որտեղ վերջինս մեղադրում էր Արցախահայերին՝ *այլ պետության տարածք մտնելու, 26 տարի տիրելու հենակետեր սարքելու, տներ կառուցելու և հանքեր շահագործելու մեջ*[85]:

Ապրիլի 27-ի երթի մասնակիցները մոմավառություն են անցկացնում Լեոյի փողոցում:

Մայիսի 6-ին «Պատիվ ունեմ» դաշինքի կողմից կազմակերպված երթը լուսաբանող տեսագրություններում երևում էր, թե ինչպես է ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի մայրը՝ Մարիա Հովհաննիսյանը, պատշգամբից թքում ցուցարարների ուղղությամբ և միջնամատ ցույց տալիս[86]: Ա. Սիմոնյանն արդարացրել էր վերջինիս վարքը, պնդելով, որ ցուցարարներն իր և ընտանիքի հասցեին վիրավորանքներ էին հնչեցրել և իր մայրը նյարդայնացնել էր, մինչդեռ տեսանյութում երևում են միայն Մ. Հովհաննիսյանի գործողությունները[87]:

Մայիսի 8-ին ընդդիմության կողմից դեպի Գյումրի անցկացված ավտոերթի ընթացքում տեղի ունեցան բախումներ՝ ավտոերթի մասնակիցների և իշխանությունների աջակիցների

---

[83] «*Ընդդիմության քայլերթի մասնակիցները ծեծել են «Անտարես»-ի ղեկավարին, քրգործ է հարուցվել*», Ազատություն, 28.04.2022 թ., https://www.youtube.com/watch?v=iAdg5z5-Op4
[84] «*Երևանի Լեոի փողոցում տեղի ունեցած խուլիգանության գործով մեկ անձ կալանավորվել է*», ՀՀ ոստիկանություն, 29.04.2022 թ., https://police.am/news/view/berman_290422.html
[85] «*Մտել են այլ պետության տարածք 26 տարի տիրել, հենակետեր սարքել, տներ կառուցել. Արմեն Մարտիրոսյանի սկանդալային գրառումը*», News.am, 20.12.2022 թ, https://news.am/arm/news/619996.html
[86] «*Ալեն Սիմոնյանի մայրը թքում է ցուցարարների ուղղությամբ եւ միջնամատ ցույց տալիս*», News.am, 06.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=_BSZF2F9fLU
[87] «*Ցուցարարները վիրավորանքներ են հնչեցրել իմ և իմ ընտանիքի հասցեին, որին ի պատասխան մայրիկի նյարդերը չի դիմացել. Ալեն Սիմոնյան*», Ազատություն, 06.05.2022 թ., https://www.azatutyun.am/a/31837910.html

միջև, ովքեր իրականացնում էին հակադարձ ուղղվածությամբ հավաք: Վերջիններս ի սկզբանե արգելափակել էին դեպի Գյումրի և Հոռոմ գյուղ տանող ճանապարհների խաչմերուկը՝ իմանալով նախապես հայտարարված ավտոերթի մասին: Հակադարձ ուղղվածությամբ հավաքի առավել ակտիվ մասնակիցներից էր «Թաթուլ Ասլիյան» անունով[88] ֆեյսբուքյան օգտահաշիվ ունեցող անձը, որն, ըստ նույն օգտահաշվում առկա տեղեկատվության, հանդիսանում է Մասիս քաղաքի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության աշխատակից[89]: Վերջինս ֆեյսբուքյան ուղիղ եթերը միացրած մոտեցել էր խաչմերուկին և կոչ արել հակադարձ ուղղվածությամբ հավաքի մասնակիցներին վանկարկել «առանց դաշնակ[90] Հայաստան»: Այնուհետև եթերում հայտարարել էր, որ շարունակելու է փակել ավտոերթի մասնակիցների մուտքը Գյումրի, «ինչքան ուժ ունեն պահելու են իրենց վարչապետին» և կոչ էր արել գյումրեցիներին միանալ գործողություններին[91]:

Նույն օրը համացանցում տարածվեց տեսանյութ, որտեղ երևում էր, թե ինչպես են Գյումրի քաղաքում ընդդիմադիրների ավտոերթի մի խումբ մասնակիցներ վիճաբանության մեջ մտնում մի քանի տարեց տղամարդկանց հետ, այնուհետև ծեծի ենթարկում վերջիններիս[92]: Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ծանրացնող հանգամանքներով խուլիգանության հատկանիշներով[93]: Քրեական հետապնդում է իրականացվում 7 անձի նկատմամբ, որոնք ձերբակալվել կամ կալանավորվել են[94]: Ըստ «Հայաստան» դաշինքի պատգամավոր Արամ Վարդևանյանի՝ միջադեպից առաջ տարեցները հավկիթներով հարվածել էին ավտոերթի մասնակիցների մեքենաներին և հայհոյել[95], սակայն տեսանյութում երևում է միայն ծեծի դրվագը:

Մեկ այլ միջադեպ կապված էր իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքային կառույցի խորհրդի անդամ Գնել Սարգսյանի հետ, որը մայիսի 10-ին իր ֆեյսբուքյան ուղիղ եթերում գտնվում էր Վահան Զատիկյանի անվան զբոսայգու մոտ, որտեղ նույն ժամին պետք է անցկացվեր ընդդիմության կողմից նախորդ օրը հայտարարված հավաքը: Գ. Սարգսյանը մեքենայով

---

[88] Օգտահաշվում նշված անուն ազգանունով անձ ՀՀ ընտրողների ռեգիստրում առկա չէ https://www.elections.am/Register
[89] Տե՛ս «Թաթուլ Ասիլյանի» ֆեյսբուքյան էջը, https://www.facebook.com/miki.mikoyan/about
[90] Հայ Յեղափոխական Դաշնակցությունը ընդդիմադիր «Հայաստան» դաշինքի մասնակից հիմնական կուսակցություններից է:
[91] Տե՛ս «Թաթուլ Ասիլյանի» ֆեյսբուքյան էջը, 08.05.2022 թ., https://www.facebook.com/miki.mikoyan/videos/661583755290857/
[92] «*«Դիմադրություն» շարժման մասնակիցները Գյումրիում տարեցների են ծեծել. նյութեր են նախապատրաստվում*», Լուրեր, 09.05.2022 թ. https://www.youtube.com/watch?v=smmfdJeECvo
[93] «*Գյումրիում տարեց մարդկանց ծեծի ենթարկելու դեպքի առնչությամբ քրեական գործ է հարուցվել*», Առաջինի լրատվական ալիք, 09.05.2022 թ., https://bit.ly/3MdmcTn
[94] «*Գյումրիի միջադեպի առթիվ հարուցված քրգործով կա ևս 2 ձերբակալված. ՔԿ*», News.am, 13.05.2022 թ., https://news.am/arm/news/701735.html
[95] «*Քրեական իրավունքում «պրովակացիա» հասկացություն կա, սա այդ դեպքն է. Վարդևանյանը՝ Գյումրիում միջադեպի մասին*», News.am, 10.05.2022 թ., https://news.am/arm/news/700952.html

մոտենում էր հավաքի մասնակիցներին և դիտավորյալ վիճաբանության մեջ մտնում վերջիններիս հետ, գոռգոռում և ուղղում սեռական բնույթի հայհոյանքներ[96]:

Եզրակացություն

2020 թ. Արցախյան պատերազմից հետո Հայաստանում տիրող ներքաղաքական լարված իրավիճակը չի հանգուցալուծվում, ինչը շարունակում է ծայրահեղ բացասաբար անդրադառնալ մարդու իրավունքների, ներառյալ՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի պաշտպանվածության վրա: Ներքաղաքական դաշտի լարվածության բացասական հետևանքները չեն սահմանափակվում կուսակցական և քաղաքական դերակատարների միջև խնդիրներով և անդրադառնում են քաղաքացիների տարբեր շերտերի վրա: Ապրիլ-հունիս ամիսներին տեղի ունեցած հավաքների ընթացքում դիտարկվել են իրավապահների կողմից բազմաթիվ միջամտություններ, քաղաքական հետապնդումներ և բռնություններ ընդդիմության հավաքների մասնակիցների նկատմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման արդյունքներով ոստիկանության կողմից հավաքների ազատության իրավունքի նկատմամբ միջամտությունները հազվադեպ են ուղեկցվել Սահմանադրությամբ ամրագրված համաչափության սկզբունքի պահպանմամբ: Հավաքների ակտիվ մասնակիցների նկատմամբ քրեական գործերի հարուցումն և կալանավորումը հանդիսանում է փաստացի պատժի դրսևորում՝ պայմանավորված վերջիններիս կողմից ընդդիմադիր քաղաքական ուղղվածության խաղաղ հավաքների մասնակցությամբ: Թեև հայտարարվել է որոշ ոստիկանների նկատմամբ ծառայողական քննության անցկացման մասին, դիտարկված խաղաղ հավաքների ընթացքում անհամաչափ ուժի, բռնությունների կիրառման գործելաոճը շարունակվում է գրեթե ամբողջական անպատժելիության պայմաններում, այդ գործելաոճի դադարեցման կոչերը մնում են անարձագանք: Ոստիկանության որևէ ծառայող մինչ այժմ պատասխանատվություն չի կրել սույն զեկույցում նկարագրված խախտումների համար: Հատկանշական է, որ միայն մայիս ամսվա ընթացքում ոստիկանության ծառայողներին տրամադրվել է 3,12 միլիարդ ՀՀ դրամի չափով պարգևավճար[97]:

Հայաստանի Հելսինկյան կոմիտեն նախորդ զեկույցում անդրադարձել էր ճանապարհների արգելափակման և դրա իրավական հետևանքների վերաբերյալ միջազգային

[96] Տե՛ս Գնել Սարգսյանի ֆեյսբուքյան էջը, 10.05.2022 թ., https://www.facebook.com/gnel.sargsyan.18/videos/674003637267141/ ,
«*Հայհոյանքներ ու քաշքշուկ՝ ՔՊ-ական դերասան Գնել Սարգսյանի մասնակցությամբ*», 24TV, 10.05.2022 թ., https://www.youtube.com/watch?v=QO9w2GF2M04&list=PL1-GkQya6dCX_OEGO8_MPoeOcHa5Fr0AA&index=10
[97] «*Ոստիկանները մայիսին ավելի քան 3 մլրդ դրամ պարգևավճար են ստացել*», Սիվիլնեթ, 25.05.2022 թ., https://bit.ly/3PFRFPs

չափանիշներին: Ըստ Խաղաղ հավաքների և միավորումների իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի՝ «ճանապարհային երթևեկության ազատ հոսքը չի կարող ինքնաբերաբար գերակայել խաղաղ հավաքների ազատության նկատմամբ»[98]: Հետևաբար ցանկացած միջամտություն պետք է լինի նախատեսված օրենքով, անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում և հետապնդի նախատեսված իրավաչափ նպատակներից որևէ մեկը: Խաղաղ հավաքների ընթացքում զանգվածային բերման ենթարկումների և ձերբակալությունների գործելաոճը մարդու իրավունքների տեսակետից հաճախ համարվում է կամայական[99]: Ոստիկանության կողմից ցանկացած ուժի կիրառում պետք է ինքնաբերաբար առաջ բերի շտապ քննություն[100], իսկ բռնությունները առհասարակ անթույլատրելի են: Նաև այս պատճառով չափազանց կարևոր է հավաքի վայրում գտնվող ոստիկանության բոլոր ծառայողների կողմից անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշանների կրումը[101]: Մինչդեռ, ըստ մշտադիտարկման արդյունքների, ոստիկանության գործելաոճը ավելի հաճախ ճիշտ հակառակն է:

Ինչ վերաբերում է հավաքի առանձին մասնակիցների կողմից բռնության դրսևորումներին՝ դրանց պատճառով խաղաղ հավաքների ազատությունն իրացնող այլ մասնակիցների իրավունքների սահմանափակումները չեն կարող արդարացվել[102]: Ոստիկանությունը նման դեպքերում պարտավոր է հավաքի վայրից հեռացնել նման անձանց, որի ընթացքում նաև կարևոր է համագործակցությունը կազմակերպիչների հետ: Հավաքի վայրում գտնվող «սադրիչները» պետք է ենթարկվեն պատասխանատվության նույն կերպ, ինչպես հավաքի բնականոն ընթացքը խաթարող կամ մասնակիցներին ապօրինի գործողությունների դրդող ցանկացած անձ[103]:

Ինչպես նշվել է նախորդ զեկույցներում, քրեական օրենսգրքի 236-րդ[104] հոդվածը՝ հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելու մասով, չի համապատասխանում հավաքների ազատության իրավունքի միջազգային չափանիշներին[105]:

Հաշվի առնելով ապրիլ-հունիս ամիսներին կատարված մշտադիտարկման արդյունքները, Հայաստանի Հելսինկյան կոմիտեն արձանագրում է, որ նախորդ

---

[98] Տե՛ս *Խաղաղ հավաքների և միավորումների իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի առաջին թեմատիկ զեկույցը,* A/HRC/20/27, 41-րդ պարբերություն, 21.05.2012, https://www.ohchr.org/sites/default/files/Documents/HRBodies/HRCouncil/RegularSession/Session20/A-HRC-20-27_en.pdf

[99] *Խաղաղ հավաքների ազատության ուղեցույց (3-րդ հրատ.)*, Վենետիկի հանձնաժողով և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, CDLAD(2019)017, 218-րդ պարբ.,

[100] *Նույն տեղում,* 33-րդ պարբ.

[101] *Նույն տեղում,* 169-րդ պարբ.

[102] Տե՛ս, ի թիվս այլոց, *Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի*, 11800/85, ՄԻԵԴ, 53-րդ պարբ. (1991), *Ֆրումկինն ընդդեմ Ռուսաստանի*, 74568/12, ՄԻԵԴ, 99-րդ պարբ.(2016)

[103] *Խաղաղ հավաքների ազատության ուղեցույց (3-րդ հրատ.)*, Վենետիկի հանձնաժողով և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, CDLAD(2019)017, 174-րդ պարբ.

[104] Նախորդ զեկույցների ընթացքում գործում էր հին քրեական օրենսգիրքը, որում համապատասխան հանցակազմը նախատեսված էր 163-րդ հոդվածով:

[105] *Խաղաղ հավաքների ազատության ուղեցույց (3-րդ հրատ.)*, Վենետիկի հանձնաժողով և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, CDLAD(2019)017, 52-րդ պարբերություն,

ժամանակահատվածներում ներկայացված առաջարկությունները շարունակում են մնալ արդիական:

Առաջարկություններ

Ոստիկանությանը

1. Ձեռնպահ մնալ հավաքների ազատության իրավունքի խախտումներից: Հավաքների ազատության իրավունքի ցանկացած միջամտություն պետք է նախատեսված լինի օրենքով և հիմնավորված լինի համաչափության սահմանադրական սկզբունքով:
2. Իրենց իրավասության շրջանակներում աջակցել խաղաղ հավաքների ընթացքին: Օրենքի խախտմամբ անցկացվող, սակայն խաղաղ բնույթ ունեցող հավաքների նկատմամբ միջամտության կամ դրանք դադարեցնելու անհրաժեշտության դեպքում նվազագույնի հասցնել ուժի կիրառումը և առաջնորդվել համաչափության սկզբունքով:
3. Բացառել հավաքների վայրերում ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշան չկրող ոստիկանների ներկայությունը:
4. Հակադարձ ուղղվածությամբ հավաքների պարագայում դրսևորել առավելագույն ջանքեր՝ մասնակիցների միջև բախումները բացառելու ուղղությամբ: Երթերի և այլ հավաքների ընթացքում ծառայություն իրականացնելիս ոստիկանության ծառայողների բաշխվածությունը կազմակերպել այնպես, որ հնարավորինս նվազեցվի սադրանքների և ընդհարումների հավանականությունը:
5. Պատշաճ քննության առնել հավաքների ազատության իրավունքի ցանկացած անհամաչափ միջամտության, անհամաչափ ուժի և բռնությունների գործադրման դեպքերը, պատասխանատվության ենթարկել լիազորություններն անցած և կոպիտ խախտումներ թույլ տված իրավապահ համակարգի ծառայողներին:

ՀՀ ԱԱԾ-ին և քննչական մարմիններին

1. Բացառել անձանց նկատմամբ քրեական հետապնդումը՝ վերջիններիս կողմից խաղաղ հավաքների կազմակերպման և դրանց մասնակցելու իրական պատճառով:

ՀՀ Կառավարությանը և Ազգային ժողովին

1. Դադարեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված *հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելու* հանցակազմի գործունեությունը և առկա խմբագրությամբ այն ներկայացնել ԵԽ Վենետիկի հանձնաժողովին և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին՝ փորձագիտական կարծիք ստանալու նպատակով:

Հավաքի կազմակերպիչներին

1. Օգտվել անհրաժեշտ թվով կարգադիչներ ունենալու՝ «Հավաքների ազատության մասին» օրենքով նախատեսված հնարավորությունից: Կարգադրիչների քանակը

որոշել ելնելով ինչպես հավաքի կամ երթի մասնակիցների քանակից, այնպես էլ հավաքի նախատեսված ընթացքի առանձնահատկություններից:

2. Մշտապես համագործակցել հավաքի վայրում ծառայություն իրականացնող ոստիկանության ներկայացուցիչների հետ: Հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը խախտող անձանց առկայության բոլոր դեպքերում դիմել ոստիկանությանը՝ այդ անձանց հավաքի վայրից հեռացնելու նպատակով: